

Վ Ր Ե Փ

(Հրամատ ֆոն-Վիլհելմիոնիկ)

Փրանսիական հիւսիսային բանակի ընդհանուր հրամանատար Փէրտհերթը 1871 թուի յունուարին ստիպուած էր նահանջել և պատերազմի դաշտը գերմանացիներին թողնել: Նա ի զուր էր փորձում իրեն համար ճանապարհ բանալ. գերմանական երկու գումարտակներ պարսպի նման կանգնած էին իւր և Պարիզի միջև: Վերջապէս նա որոշեց մի վերջին յուսահատ փորձ ևս անել, բայց Սէն-Կենտէնի մօտ կոր ի գըլուն ջարդուեցաւ և եօթ ժամուայ կատաղի կռուից յետոյ նահանջ տուաւ դէպի կամքրէ:

Փրանսիայի հիւսիսային կողմը Սենա և Սոմ գետերի միջև գտնուած ամբողջ տարածութիւնից հեռացան ֆրանսիական զօրքերը և երկիրը գերմանացիների ձեռքն ընկաւ, բայց երկիրը նաղաղ չէր. քաղաքներում, աւաններում ու գիւղերում մնացել էին բնակիչներ, որոնք սիրո չէին անում իրենց բնակարաններից հեռանալ: Խորին և խուլ ատելութեամբ սպասում էին պրուսացիների գալուն:

Ամեն անդամ որ արեւելեան կողմից թնդանօթաձգութեան որոտը չէին լսում, նրանք աներից դուրս էին գալիս փողոց և միմանց շշնչալով հաղորդում:

— Մերոնք են հայ. այսօր այդ անիծած պրուսացիներին մի լաւ կուտացնեն:

Եւ ամեն անգամ էլ, երբ որ այդ կարձատև զարհութելի օրն անցնում էր ու ձերային գիւղերը վրայ համում, նրանք վիղերը ճուկ իրենց տներն էին մտնում:

— Դարձեալ բան չդուրս եկաւ, — ասում էին նրանք և կրկին յաջողութեան յայսը հեռանում էր նրանցից:

Եւ ահա, Ա. Կենտէնի օրհասական պարտութիւնից յետոյ, երբ հասկացան թէ այլ ևս ոչ մի յս չկար, սաստիկ յուսահատ դրութեան մէջ ընկան և մահերն աչքերն առած վճռեցին վրէժ լուծել:

Այժմ գերմանացիներն ասես թէ մեղուների բազմութեամբ լինէին պաշարուած. Խուլ տղղոցը նրանց ժամ առ ժամ մօտալուտ վատանգն էր գուշակում: Խոր գերմանացին ները դաշտով անցնելու կլինէին, յանկարծ անտարից հրացանի ձայն կլսուէր և մինչև որ նրանք մեղմացող պայմիւնին ականջ կրնէին առանց գիտենալու թէ ում վրայ է ուղղուած դա, հրացանը երկրորդ անգամ կթնդար և գնդակը վշտահար բղղոցով կընկնէր սառած, կոշա գետնի վրայ: Կըսկսէին աակն ու վրայ ասել թփերը, ամբողջ դաշտը խուզարկել. Երբեմ ֆրանսիացիներին կգտնէին ու տեղն ու տեղը կանչնացնէին: Զարագուշակ բղղոցը մի առ ժամանակ կդարէր, բայց ընկածների տեղ շուտով նորերը կերեային և կոիւը նորից կսկսուէր:

Դժուար չէր դանել, թէ որտեղ էին ապաստանարան գտնում այդ հրացանաձիգները, գիւղերի ամեն մի քարաշէն տուն պատրաստի ապաստանարան էր: Բայց այդ գիւղերի մէջ մանաւանդ մէկը շատ վաս համբաւ ունէր և կատարեալ աւազակների բուն էր համարում: Դա մի մեծ գիւղ էր Պիկարդիայի հեռաւոր անկիւններից մէկում:

Բայց որովհետև այդպիսի հաստատուն փաստեր չկային, որով ապացուցուէր գիւղի վայելած վաս համբաւը, ուստի որոշուեց ճշգրիտ աեղեկութիւններ հաւաքել և եթէ երևայ, որ դա ճշմարիտ է, այն ժամանակ հիմնայտակ կործանել այդ աւազակների բունը: Փորձելու համար մի գումարտակ հետեւակ զօրք զետեղեցին գիւղի մէջ, պատուիրելով, որ ամենախիստ զգուշութիւն բանեցնեն: Ասենք զինւորներին զգուշացնելու կարիք էլ չկար, որովհետև նրանք էլ իրենց ընկերակիցներից իմացել էին, թէ ինչ վտանգաւոր տեղ էին ընկած այժմ, և շարունակ ականջները ձայնի էր: Բոլոր աները, ուր որ իրենց բնակութեան համար տեղ էր նշանակուած, բունջ ու պուջախ բըրբել, տեսել էին, բայց ոչ թագցրած հրացան էին դաշել և ոչ էլ առհասարակ մի որսիցէ կասկածելի բան, բայց դրա փոխարէն մառանները

լի էին պատուական գինիներով։ Ճշմարիտ է, թէև գինիները կարող էին թունաւորուած լինել, և զինուորները սաստիկ կասկածանքով սկսան համը տեսնելը բայց այդ երկիւղն էլ անցաւ շուտով։ Պատուական խմիչք էր և օրէօր աւելի ու աւելի էր դիւր գալիս նրանց։

Բայց և այնպէս դրանով նրանց զգուշութիւնը չնուազեցաւ և նրանք դարձեալ վստահութիւն չունէին «մահարեր ծակի» վրայ։ Մի բանի տարօրինակ երեսոյթներ նրանց ակամայ մտածել էին տալիս։

Ամբողջ գիւղի մէջ ոչ մի երիտասարդ գիւղացի չկար։ Միայն կանայք ու ծերունիներ էին մնացել։ Կանայք թշնամական վախով թաքը էին կենում տանը, իսկ ծերունիները գէմբերը ժանդուած լուռ էին մնում, Գիւղում լոռութիւն ու խաղաղութիւն էր տիրել։ Ակամայ հարց էր զարթնում, թէ ո՞ւր էր երիտասարդութիւնը։ Վերջապէս գանուեցաւ մէկը, որ լուծեց ինդիրը։ Դա մի ծերունի, թօշակով ապրող անտառապահ էր, որ ամենայն օր գնում էր սրճարան իւր բաժին մի բաժակ արսենար խմելու, այդ այն սրճարանն էր, ուր և գերմանացի սպաներն էին հաւաքւում։ Նա մի զուարթ և զուարճախօս մարդ էր զուտ ֆրանսիական դեղձան բեներով և ուրախ, կենդանի աշբեքով։ Ամբողջ գիւղում միայն նա էր, որ գերմանացիների հետ միւնոյն յարկի տակ էր հաւաքւում։

Մի անգամ դէպքն այնպէս բերաւ, որ սպաներն առաջարկեցին նրան իրենց հետ բաժակակից լինել. և շուտով նրանց մէջ խօսակցութիւն բացուեց։

— Ո՞ւր են ձեր երիտասարդները, — հարցրեց մի սպայնար բաժակը գինի լցնելով։

— Տէր Աստուած, — պատասխանեց անտառապահը ժըպտապով, — պարօնայք, թէ որ այժմ ձեր գիւղերն էլ տեսնելու լինինք, նոյնպէս պիտի հարցնէինք — ո՞ւր են ձեր կարիճները։ Անշուշտ ամենքն էլ պատերազմի են գնացել. մէկն պյսաեղ, միւսն ուրիշ տեղ, իսկ նեղձ կնանիքը նստած իւրենց գլուխն են լաց լինում։

— Մենք պատրաստ էինք ձեր ձանձրացող կանանց միսիթարելու, — ծիծաղելով ասացին սպաները, — բայց նրանք իրենց սրաերի նման դռներն էլ պինդ փակել են։

— Ի հարկէ, — խորամանկութեամբ աչք անելով ասաց անտառապահը, — միայն կին լինի, պարոն սպաները կաեւնեն, թէ անտառապահը ինչքան հմուտ է նրանց մվիթարելու։ Միայն այժմ տարին այն չէ։

— Ի հարկէ, եթէ որ աւելի ջահիլ լինէիք, — նկատեց մի կապիտան սեղանի միւս կողմից աչքերը սևեռած զււարթ ծերուկի աչքերին նայելով, — անշուշտ դուք էլ մի ուրիշ բանի վրայ կլինէիք, և ոչ թէ գիւղում կմայիք։ Այնպէս չէ։

Այս ասելիս կապիտանը մի այնպիսի թափանցող հայեացը էր ձգել և մի այնպիսի սուր ձայնով, որ, ինչպէս երևում էր, ամենեւին դեւր չեկաւ անտառապահին։

— Այսինքն Բնէ կանէի պ. կապիտանի կարծիքով, — հարցըց անտառապահն առանց խօսակցե երեսին նայելու։

— Դուք էլ գիւղի միւս երիտասարդների նման կհեռանայիք և կանէիք նոյնը, ինչ որ նրանք են անում՝ թփերի մէջ թաք կացած, ցելերի մէջ պառկած պրուսացիների վրայ հրացան կապրպէիք։

— Ուրեմն պարոն կապիտանը կարծում է որ ես ազատ հրացանաձիգ կդառնայի, — և ծերունին մի այսպիսի ծիծաղելի ենթադրութեան վրայ մինչև անգամ տեղիցը վեր թըռու և գլուխը դմրդմբացըց։

— Ե՞յ, Ռուդոլֆ, լսո՞ւմ ես, — ասաց նա սրճարանի տիրոջը դառնալով, որ ձեռները ջերը դրած, դախի ետևն էր կանգնած, — մենք՝ ազատ հրացանաձիգ կդառնայինք։ Պուն և ես, լաւ հրացանաձիգ կդառնայիր, ես իմ Աստուածը... Հա, Հա։ Դու, որ օրէնը հազար անգամ անեծելով անիծում ես այդ ազատ հրացանաձիգներին։ Որ նրանք չեին եղել, այս անիծեալ պատերազմը վերջացած կլինէր և բու գործոդ չէր բայբայուիլ։

Սրճարանի տէրը սև մօրուսով, մռայլ հայեացըով մի ֆրանսիացի էր։ Նա ամբողջ ժամեր լուռ մոախոհութեամբ կանգնում էր դախի ետևը։ Անտառապահի խօսքերի վրայ զարմանալի տարօրինակ արտայայտութիւննայտացաւ նրա դէմքը. — աչքերը չունց, բութ հարցական հայեացը սևեռած անտառապահի վրայ, յետոյ բաց արաւ բերանը կարծես մի բան էր ուղում ասել, բայց ոչ մի բառ չարտասանեց. և այդպէս կիսարաց բերանով մաց կանգնած։

—Որ այդպէս է մի բաժակ ապօէնտ էլ տուր, —կանչեց անտառապահը ձեռքով դախլին խփելով։ Այժմ նա սըրճատան տիրոջ դէմ առ դէմ կանքնած ուղիղ նրա աշքերին էր նայում։ Յանկարծ սրճատան տիրոջ դէմքի վրայով մի ցնցում անցաւ, ձեռները գրանից հանեց, բաժակը լցրեց և բոլոր ուժով գոռաց։

—Գրողը տանէ ազատ հրացանաձիգներին։

—Հա, հա, պարոն կապիտան, —ծիծաղում էր ծերունին զինուորականին դառնալով, —ամբողջ շաբաթ է Ռուդվիշը բերանը չէր բաց արել և ահաւասիկ նրա առաջին խօսքերը՝ գրողը տանէ ազատ հրացանաձիգներին։ —Եւ ձերունին ծիծաղից թուլանում էր։

Բայց ինչպէս երևում է այս զուարթութիւնը ոչ մի տպաւորութիւն չէր գործել կապիտանի վրայ։

— Ձեր երկրի մասին չէ իմ խօսքը, —շարունակեց նա, — հապա միւսների։ Ձեմ կարող երևակայել, որ բոլոր աղամարդիկ 30 տարեկանից մինչև 60 տարեկանը բոլորն էլ զօրքի մէջ լինին. չէ՞ որ դեռ ընդհանուր զինուորութեան համար կոչ եղած չէ։

Յանկարծ դախլի ետևից մի խուլ և գաղացած ձայն լսուեց, որ աւելի մրթմրթոցի էր նման։

— Եթէ պարոններն ուզում են իմանալ, թէ ուր են մեր աղամարդիկը, թող բարի լինին նրանց հողի տակ փնտրելու. այնտեղ նրանց կդանէք սպանուած, հէնց ձեր ձեռքով ջարդուած։

Սրճարանի տէրն էր խօսողը։ Նա նորից ձեռները ջէպօդրեց և գլուխը խոնարհած նայում էր առաջը, ասես թէ կատաղած գոմեց լինէր։

Սպաների մէջ լուսթիւն տիրեց. նրանք լուռ իրար էին նայում։ Այդ խօսքերը ուզզակի սրաից էին բղխում։ Պարզ էր, որ Ռուդոլֆը պրուսացիներին բարեկամ չէր։

Յանկարծ լուսթիւնը խանգարեց մի ձայն, որ դախլի ետևի սենեակից ուզզուած էր սրճատան տիրոջը։ Լուսթեան մէջ առանձնապէս որոշ էին լսում խօսքերը։ Կանացի գեղեցիկ և խոր ձայն էր դա։

— Օ՛հ, madame la Reine, —բացականչեց անտառապետը. նա մօտեցաւ դախլին և սկսաւ խօսել կողքի սե-

նեակում գտնուող կնոջ հետ:

— Ներս եկէք, Ռուդօլֆն զբաղուած է և չէ կարող գուրս դալ: Մեղանից վախենալու բան չունիք: — Նա երեսը դարձրեց դէպի սպաներն ու Խորամանկաբար աչքով արեց:

— Անշուշտ, մենք կանանց չենք դիպչիլ, — ուրախ ուրախ հաստատեցին սպաները:

Նկատելի էր, որ մի գաղանի յուզում տիրել էր Ռուդօլֆին: Նա ուզում էր գնալ, որպէս զի չթողնէ կնոջը: Ներս մանելու Բայց անտառապահը Նրա թեւից պինդ բռնեց ու ականջին մի բան շշնչաց: Բառերն այնքան կամաց արտասանեց, որ միայն շրմունքների շարժումն էր երևմում, բայց, ինչպէս երևում է, դրանք իրենց ներդործութիւնն ունեցան սրճատան տիրոջ վրայ. Նա կանգ առաւ և դէպի դուռը դառնալով ասաց:

— Ինչի՞ չէր ներս դալիս, տաձառե Գիշիօ:

Մօս երեսուն տարեկան մի կին չէմբից ներս մտաւ: Մի առանձին բան չկար Նրա վրայ, բայց գերմանացիների մէջ կանայք այնքան քիշ էին պատահում, որ բոլոր սպաների աչքերը Նրան գարձան և ամենքն էլ հայեացքները յառած դիպում էին Նրան:

Կինը զգալով, որ բոլորի աչքը իւր վրայ է, ակամայ շարժումով աւելի ևս պիստ փաթաթուեցաւ կրկնոցի մէջ, որով ծածկած էր իւր ուսերն ու իրանը: Նրա ուժեղ, բայց գեղեցիկ դէմբը շառագունեց և այն միջոցին, որ ցած ձայնով խօսում էր Ռուդօլֆի հետ, աշխատում էր աննկատելի կերպով բամակը սպաներին դարձնել: Ըստ ամենայնի զգալի էր, թէ որքան անհաճոյ էր իրեն այդ ուշադրութիւնը:

— Ուզում էք ձեր տունը դրկեմ, — ցած ձայնով հարցնում էր Ռուդօլֆը մի գլուխ շաքարը դախիլ վրայ դնելով: Գիտեք արդէս, թէ բաւական է որ հրամայէք...

— Ոչ, շնորհակալ եմ, — կարճ պատասխանեց նա ու փողը սեղանի վրայ դրեց:

Ռուդօլֆը մի տեսակ մրմուց արձակեց և այնպէս ձևացրեց, որպէս թէ չէր ուզում փողը վերցնել:

— Madame Գիշիօ, — ասաց նա դժգոհութեամբ, —

գիտէք, որ ձեր արածը բոլորովին աւելորդ բան է։ Յամենայն դէպս ամենևին շատպելու բան չկար:

— Իսկ դուք էլ գիտէք, որ ես այսպէս եմ ուզում, — շտապով ու ջերմութեամբ պատասխանեց կինը՝ հպարտութեամբ գլուխը բարձրացնելով։ Նա շտկուեցաւ և այնպէս թուաց, թէ նա սրճատան տիրոջց բարձր էր։ Մի բանի ակնթարթ նրանք լուռ իրար աչքի էին նայում, որի միջոցն էնող աչքի մէջ արհամարհական արտայայտութիւն երևաց։ Ապա, վեր առաւ շաբարը և միւնոյն կերպով, ինչպէս մտել էր, առանց մէկին նայելու, առանց բարելու լուռ դուրս գնաց շտապով։

Ուուգօլֆը առանց իւր դժգոհութիւնը ծածկելու ուժգին ծածկեց արկի խուփը և նորից դէմքը խոժոռեց ու լուց։

— Ասում էք madame la Reine? — Հարցրեց անտառապետին սպաներից մէկը, — ուրեմն նա թագուհի՞ է։

— Հը՛, հը՛, — ծիծաղեց ծերունին, — այնպէս չէ՛, մի այդպիսի բան կայ նրա վրայ։ Նա նորմանդացի է, իսկ այնտեղ բոլորն էլ այդպէս են։ Իսկ ճիշտը նա Ուեյն Գիւյիօի պյուրին է։ Ահա այդ անուան վրայ էլ սրախօսութիւններ են անում այսաեղ։

— Այրի՞ է, — Հարցրեց սպան։

— Այս, նրա ամուսնութիւնը, ծերունի արհեստաւոր Գիւյիօն ամուսնութիւնից երկու տարի յետոյ վախճանեցաւ, և ճիշտն ասած՝ շատ լաւ էլ արեց։ Նրա մահից յետոյ լոյս ընկան նրա մի քանի արագքները։ Ըստ հարուստ մարդ էր, շատ էլ ժլատ։ Այս տունը որ տեսնում էր, — և նա ցոյց տուաւ սրճատան դէմ ու դէմի մի յարկանի տունը, — թողեց կնոջը դրա հետ էլ զգուանք և սարսափ դէպի քոլոր տղամարդիկ։ Խեղճ կինը շատ վիշտ քաշեց այդ հետաւորց աւերակի հետ ապրելուս, այդ պատճառով էլ նա այդքան հպարտ է, մենակ նստում է տանը, ոչ ոքի հետ գնալ գալ չունի և ինքն է իւր տնտեսական գործերը հագում։ Եւ մինչեւ այժմ էլ դեռ ոչ մի տղամարդ չէ արժանացել նրա հետ խօսակցելու։

Այս ասելով նա մի աչքով ցոյց տուեց Ուուգօլֆին, ու բը այդ միջոցին քթի տակ մըմուալով եռանդով զբաղուած

Էր իւր բաժակներով ու յուրաններով և ասես թէ ոչինչ
ոչ տեսնում էր, ոչ լսում: Անտառապահը կրկին աչքով
ցոյց առւաւ Ռուդոլֆին և միւնդյան ժամանակ մի այնպիսի
ծիծաղելի ծամածոռութիւն արեց, որ սպաները ծիծաղից
կոտարուեցան:

Ի՞նչ ուրախ ծերունի էր արդարև:

Այդ միջոցին ներս մտաւ ադիւտանտը և մի լուր բերեց,
որ բաւական յուզում առաջացրեց, — գումարտակը
գիւղից պիտի հեռանար: Որովհետև ազատ աթոռ չկար,
ուստի անտառապահը վեր կացաւ աեղից և իւր աթոռը
ադիւտանտին առաջարկեց, իսկ ինքը մօտեցաւ դախլին, ար-
մուկով յենուեցաւ վրան և սկսաւ Ռուդոլֆի հետ խօսել:
Ռուդոլֆը մուայլ էր և խոճուած:

— Ես բու վարմունքդ չեմ հասկանում, — գրգռուած
շնչաց նա անտառապահին, — ինչո՞ւ ես այդ անիծած գեր-
մանացիներին մեր ներքին գործերը հաղորդում:

— Կամաց, յիմար գլուխ, ատամների արանքով սուլից
անտառապահը: Նա գլխով աննկատելի կերպով գերմանա-
ցիների կողմը ցոյց տուեց: Նրա գեմքի գծերը ուշադրու-
թեամբ լարուեցան: Սպաների խօսակցութեան մի քանի խօս-
քից հասկացաւ, որ ուլանների մասին էր խօսքը:

Ռուդոլֆը լռեց: Ծերուկի խօսակցութեան եղանակը
նրան վախեցրեց:

— Դէ, մի չիբուխս լցրու, — բարձր ձայնով ասաց ան-
տառապետը և, չիբուխը նրան տալով, կամաց աւելցրեց.
— Վերջապէս դու էլ բերանդ մի բաց արա, մի բան ասա,
որ պրուսացիներն ուրիշ բան չմասածեն: Միայն գորգուա-
լով մի խօսիլ. թէ չէ նրանց խօսանթը չեմ հասկանալ: Մեզ
մօտ ապրելու ուլաններ են գալու. ահա ինչ հասկացայ:

— Գրողը աեսնէ, — մըթմըթաց Ռուդոլֆը չիբուխը
լքցնելով:

— Մի էսկադրօն, — շարունակեց անտառապահը, — շատ
չէ, այնպէս չէ: Զե՞նք կարող դրանց հախեցը գալ. հը:

Նա չիբուխը բերանն էր դրել, Ռուդոլֆը կրակ էր
տալիս և երկումն էլ աչքերը յառած իրար էին մաիկ
տալիս:

Թէ որ գերմանացիներն այդ լոպէին նրանց աեսնելու

լինէին, ամենևին չպիտի ճանաչէին, որ դա իրենց զուարժ սեղանակիցն է։ Նրա խիտ յօնքերը կիտուել էին, աչքերից կայծեր ցայտում, ոռւնգերը լայնացել ասես արեան հոտ էին առել։ Եթէ անտառապահն, այդ բոպէին անտառում լինէր և նրա ձեռքը մի գերմանացի ընկնէր, անշուշտ գերմանացին մէկ էլ իւր օջախը չպիտի տեսնէր։

Բայց ահա սպաները տեղներից վեր կացան և հաշիւ պահանջեցին։ Մինչ Ռուդոլֆը փողն էր համրում, մի սպահ անտառապահի ուսը թօթուեց։

—Արի, սիրելիս, վերջին անգամ մի մի բաժակ էլ գըցենք. — ասաց նաև — Շուտով բաժանուելու ենք իրարից։

Ծերունին բռնեց իւր բեխը, ձիգ տուեց ու զարմացած ձևացաւ։

—Ի՞նչ, պարոնները մեզ թողնելու են։ Խեղճ Ռուդոլֆ, ինչքան վնաս պիտի ունենաս։

Սպաները ծիծաղեցան։

—Կեցցէ պատերազմը, — ասացին նրանք բաժակները. չընկացնելով։ Անտառապահը տերութեամբ գլուխը շարժեց։

—Ո՛չ, պարոն սպաներ, թող շուտով վերջանայ պյուդրադութիւնը։

—Յամենայն դէպս պ. Ռուդոլֆը կարող է հանգիստ լինել, — շարունակեց սպան. — մեզանից յետոյ ուղաններ են գալու և մննք նրանց կը գովենք պ Ռուդոլֆի արսենան ու սուրճը։

— Ուղաններ, — հարցրեց անտառապահը, — բայց պյուդրապելի բան է։

Այս երկիւղը նորից սպաների ծիծաղը շարժեց։

— Ամենևին պյուբան սարսափելի չեն ուղանները, — ասացին սպաները, — պէտք է միայն մարդկանց ճանաչել, այն ժամանակ ամեն երկիւղ կը փարապուի։ Մենք էլ բոլորովին ուրիշ գաղափար ունեինք ձեր գիւղի մասին։ Սկզբում որ եկանք, կարծում էինք թէ պյուտեղ կը հանդիպենք աղատ հրացանաձիգների, մարդկանց որսորդների, մինչդեռ դուք պատուական մարդիկ էք եղել։

— Հօ պյուդր բանը կասէ՞ք ուղաններին, — հեգնօրէն ասաց ծերունին։ — Ե՞րբ են գալու։

— Վաղը առաւօտեան։

— Նոյնպէս մի գումարտակ:

Սպաներին զուարձացրեց այս տգիտութիւնը, որ զի-
նուորական կազմութեան մասին ուներ ծերունին:

— Ուշանները գումարտակ չունին, այլ էսկադրոն. մի
էսկադրոն է գալու:

Անտառապահը գլուխը շարժեց:

— Մէկ բան է, — ասաց նա, — ափսոս որ, պարոններ,
դուք գնում էք: Ծառ ափսոս:

Նա բոլոր սպաների ձեռքը սեղմեց, և մի ժամից յե-
տոյ գումարտակը փողեր հնչեցնելով հեռացաւ գիւղից և
ուղղուեցաւ դէպի արևմուտք, իւր նոր բանակատեղը: Բլրա-
կի գլխին, որտեղից գիւղի փողոցը դէպի դաշտ էր գուրս
գալիս, արդէն կանգնած էր անտառապահը, մինչև որ ամ-
բողջ գումարտակն անցաւ առաջից: Ամեն անգամ, որ նա մի
սպայ չէր տեսնում, վերցնում էր գլխարկը և խոնարհ
գլուխ տալիս, որին սպաներն էլ զուարթ բարեւում էին
գլխով: Յետոյ վերադարձաւ գիւղ, բոլոր տները մտաւ որ
իմանայ, թէ արդեօք մի բան մնացել էր. բայց գերմանա-
ցիներն ամեն բան տարել էին, դատարկ պատերն էին թո-
ղել:

Կէս ժամ անցած մէկ զարալթու գուրս եկաւ գիւղից
և արագ քայլերով դաշտը կարելով ուղղուեցաւ դէպի ան-
տառ, որը սև ժապաւէնի նման ձգուած էր հեռուն: Ժա-
մանակ առ ժամանակ նա կանգ էր առնում, որպէս զի
թափ տայ իւր կրունկներին կպած ձիւնը և ապա աւելի
ևս արագութեամբ շարունակում իւր ճանապարհը, և շու-
տով անյայտացաւ անտառի մէջ: Դա անտառապահն էր:

Գիշերը վրայ հասաւ, բայց սովորական անդորրութիւ-
նը չքերաւ: Գիւղ տանող ճանապարհների ու շաւիղների
վրայ մի տեսակ ենուլ աղմուկ ու ոտի ձայներ էին լուսում:
Զգիտես որտեղից խումբ խումբ կամ մէկ-մէկ մարդիկ էին
գալիս: Եւ երբ նրանք հասնում էին լուսոյ շերաբրի մէջ,
որոնք այժմ առատութեամբ զեղւում էին բոլոր տների
պատուհաններից, իսկոյն կարելի էր դրանց խճճուած մօ-
լուսներից և ցեսսուած շորերից ու կօշիկներից հասկանալ,
որ նրանք ամբողջ օրեր, գուցէ և ամբողջ շաբաթներ բաց
երկնքի տակ էին անց կացրել:

Թէ որ այսօրուայ հեռացած գերմանացիները կարողանային գիւղ վերադառնալ, նրանք այժմ կը հասկանային, թէ ձև էին կորել գիւղի բոլոր տղամարդիկը:

Կանայք դուրս էին գալիս աներից և ողջագուրում իրենց ամուսիններին, հայրերին, եղբայրներին: Ամեն կողմաց ուրախ բացականչութիւններ ու ծիծալ էր լուսում: Բայց մեծամասնութիւնը ցած ձայնով, փսփսալով էր խօսում: Անուգոլֆի մօտ լուսում էր ամեն տեղ. և այդ խօսքը բերնէ բերան անցնելով ցոյց էր տալիս, թէ ո՞ն էր ժողովատեղին:

Սրճատան ընդարձակ դահլիճը, որ մի մեծ քառակուսի էր ներկայացնում, հազիւ էր անդաւորում այդ բոլոր կանանց ու տղամարդկանց, որոնք զետեղուել էին այդտեղ: Առաստաղից կախուած նաւթի ազօտ լամպարները հազիւ էին լուսաւորում զինուած տղամարդկանց խումբերը, որոնք սեղանների չորս բոլորը նստառած բարկութեամբ ու տաքտաք խօսում էին: Գլխարկները դէպի ծոծրակը քաշած, որով բաց երևում էր նրանց վայրենի դէմքերը, իւրաքանչիւրը պատմում էր իւր առինը ռուշակ զեղուած քաջագործութիւնները:

Ունկնդիրները շունչները բռնած լոսում էին նրանց: Օդը լցուել էր ծնախոտի ծուխով, յեղձուցիչ տօթով, օղիի ոգիով. ասես թէ ամբողջ դահլիճը կատաղութեամբ, ատելութեամբ և արեան ծարաւով զեղուած լինէր:

—Մահ պրուսացի շներին,—բողազը պատռելով գոռաց մի սև երիտասարդ, եղան նման հասս վզով, և բաժակը կատաղութեամբ խփեց սեղանին: Կատաղութեան բարձրագուշ աղաղակներ բարձրացան ամեն կողմերից: Ինչպէս երևում է այդ խօսքերը շատ գրգռիչ ներգործութիւննեցան:

—Թող իմ ձեռքս չորնայ, —շարունակեց հրացանաձիւը, —թէ որ վաղը ես հենց մի ուղան կենդանի թողնեմ:

—Ես էլ նոյնն եմ ասում, —գոռաց մի ուրիշ երիտասարդ գիւղացի, որ հանդէպն էր նստած: —Մենք զինուած յիսուն հոգի ենք. ամեն մէկս մի պատուհանի մօտ կտեղաւորուինք և ամենքին էլ մէկ մէկ թամբից վայր կգլորենք:

—Շատ լաւ էր մտածել, ապրէք, շատ լաւ է, —գոռ-

վում էր անտառապահը մի սեղանից միւսը գնալով, ամեն-
քի հետ էլ խօսելով և բոլոր խօսակցութիւններին ականջ
դնելով: — Լաւ էր մասեել, բայց այդպէս անելը լաւ չէ:

— Ինչպէս թէ լաւ չէ, — գորդուում էին չորս կողմից:

— Որովհեակ ուլանները հարիւր հոգուց աւելի են,
հրացանի հէնց առաջին պայմիւնը լսելուն պէս նրանք յետ
կը դառնան և, թէկուզ դուք նրանցից 90 հոգու քնացնե-
լու էլ որ լինիք, դարձեալ տասը հոգին կաղատուի և ի-
րենց տեղը կդառնան. միւս օրը մեր գիւղը երկրի երեսից
կը ջնջեն:

— Բայց պէտք է որ նրանք մեռնեն, — գոռաց դար-
ձեալ սև հսկան բաժակը սեղանին զարնելով, հէնց դիտե-
նաս ուզում էր փշրել:

— Ով իւր կեանքից վախենայ, դաւաճան է, — կանչեց
հանդէպ նստողը:

— Կորչին դաւաճանները: Կորչին, — անզուսպ աղա-
ղակներ բարձրացրին ամեն կողմից:

Դաւաճան խօսքը բոլորին էլ էլեքտրականացրել էր:
Ցղամարդիկ արիւնարբու աչքերով իրենց չորս կողմերն էին
դիտում, կանանց ձայնները, խիստ, փողի ձայնի էր նմանել,
և ամրող բազմութիւնը անմիտ և անառիթ կատաղութեամբ
բռնուած աղմում էր ու անզուսպ գորդուում, իրար անց-
նում:

Այս գժոխային խառնակութեան մէջ լսուեց անտա-
ռապահի որոշակի և հնչուն ձայնը:

— Դէ լսեցէք ուրեմն, — կանչում էր դահլիճի մէջ կանգ-
նած, որպէս զի բոլորն էլ տեսնէին: — Դուք ոչ միայն ու-
ղաններին պէտք է ընդունիք, այլ և ամեն տեսակ յարմա-
րութիւններ պէտք է տաք, ինչքան կարելի է լաւ կերակրէք
ճաշերով, նախաճաշերով ու ընթրիքներով, մի խօսքով ին-
չով որ կարող էք:

— Դու ուզում ես նրանց մեզ համար չաղացնես:

— Եյս, այդ եմ ուզում, իսկ աղն ու պղպեղը ես
կը հոգամ:

— Կեցցես, չին բրակոնիկր: — ծիծաղում էին չորս բո-
լորքից և համակրութեամբ նայում անտառապահին: — Մեր
չին խարերայի վերնատանը միշտ մի լաւ միտք կըլինի:

—Մենք փոշու նման կսրբենք ուլաններին, —շարունակեց անտառապահը, —բայց այդ բանն այնքան զգով կանենք, որ ոչ ոք չի իմանալ: Հասկացա՞ք ասածու:

Բոլորի աչքը յամր հարցմամբ և զարմացած նրան էին ուղղած: Ակնյայտնի էր, անտառապահի միաքը չէն հասկացել:

—Ինչպէս հեռացած գումարտակը, այնպէս էլ սրանց կթողնենք որ մանեն գիւղ: Ամենից առաջ պէտք է նրանց կասկածը փարատենք, և այդ այժմ դժուար չէ, քանի որ պրուսացիները մեղ ռպատուական մարդիկ» են համարում: Դու հօ այդ բանը լսեցիր, Ռուդոլֆի Այնուհետև կաշխատենք, որ մի մութ գիշեր բոլոր սպաները հաւաքուին Ռուդուֆի մօտ, իսկ զինուորներին արդէն ցերեկը գինով մի լաւ կհարբացնենք և հալ ու հարաբաթից կգձենք: Նրանք լաւ գինու սովոր չեն: Ահա այն ժամանակ, իմ կարիճներս, դուք թագուն կմօտենաք պյասեղին: Ձեզանից ամենաճարպիկ ու փորձուածներից մօտ տասներկուսը դուռ ու պատուհաններից ներս կմտնէք ու կըսկսէք պրուսացիների հետ ձեր զրոյթը — հասկանում էք անշուշտ — առանց հրացանաձգութեան, հապա սուս ու փուս, դանակը ձեռներիդ, և ձեզանից ամեն մէկը իւր սպային առ միշտ յատակին մեխած կը լինի, այն ժամանակ կգնանք մեր տները, ամեն մարդ իւր տունը, իսկ այս տիկիններն էլ առաջուց հոգ կտանեն որ պյան դռները, որոնց ետևը գերմանացիները խռմիալիս կը լինին, բաց լինին, այնպէս որ մեր այցելութիւնը առանց աղմուկի կը հատարուի: Միւս օրը բոլոր պրուսացիները սուրճ վայելելիս կլինին կամ ծերունի Պետրոսի և կամ սատանայի մօտ:

Խորին լռութիւն յաջորդեց այս խօսքերին: Ամենից անզուսպ գորգոռացողներն ամենից առաջ լսեցին, ինչպէս որ միշտ պատահում է, երբ տակի մասխարաները հարկադրում են խօսքից գործի անցնելու: Կարծես թէ մի մութ և սասափելի ստուեր անձայն քայլերով մտաւ ներս, նստեց նրա մէջ և մահուան սառնութիւն տարածեց: Եյժմ խօսքը մէկ-մէկ դիմուոր սպանելու մասին չէր, հապա նախօրօք մտածուած ծրագրով մի ամրող խումբ կոտորելու մասին: Ամենքը մի գաղտնի սարսափ էին զգում, և միայն անտա-

ռապահն էր, որ պահել էր իւր առաջուայ հանգստութիւնն
ու անձնավստահութիւնը:

— Այժմ հասկացմք ինչ էի ուղղում ասել, — շարու-
նակեց անտառապահը և նրա շրթունքները մի սարսափելի
ժպիտ արտայայտեցին, — երբ ասում էի, թէ պէտք է փոշիի
նման սրբնք նրանց Հէնց որ ամենքին էլ բնացրինք,
իսկոյն նրանց՝ իրանց ձիաների, որոնց նախապէս կը-
մորտոթենք, իրենց զէնքերի ու ունեցած չունեցածի հետ
պահ կտանք գետնին: Պէտք է նրանց ջնջել երկրի երեսից,
անհետ կորցնել, որ ոչ մի հետք չմայ: Իսկ երբ պրուսա-
ցիները նորից կդան ու նրանց մասին հարց ու փորձ կա-
նեն, — քահ — մենք նրանց մասին ոչինչ չգիտենք, երբէք ու-
լաներին աեսած չենք, մեզ մօտ ոչ ոք չէ եկել Զլինք մո-
լորուած լինին, գուցէ հարեան դիւղը գնացած լինին, —
ինդրում ենք, ի սէր Աստուծոյ, փնտրեցէք, պարոններ:
Հա, հա, հա:

‘Սա բարձրաձայն քրքիչ արձակեց և աթոռը այնպէս
ուժով գետնին խփեց, որ ճրճուաց: Այդ ծիծաղը մանգա-
մց բոլորին էլ ուշքի բերեց:

— Ի՞նչ միտք է, դիւական միտք, — գոռաց սկ երիտա-
սարդը, որ բոլոր ժամանակը աչքերը անկած անտառապա-
հին էր նայում: — միտք եմ ասում է՛, — արձագանքի պէս
կրնում էին ամեն կողմից:

— Բայց դու հօ գիտես, — ասաց Ռուդոլֆը նորից գախլի
ետեղ անցնելով և կրկին բաժակները լքցնելով, — թէ ինչ-
քան զգոյշ ու կասկածու են պյտ անիծած պրուսացիները.
Երեքը որ քնեն, չորսը պահապան կկանգնեն:

— Միմէ չասացի, — պատասխանեց անտառապահը իւր
բաժակը մօտեցնելով, — որ մենք պէտք է նրանց կասկածո-
տութիւնը բնացնենք: Այդ բանի մէջ մեր տիկինները պիտի
օգնեն մեզ:

Կանայք որ լսեցին թէ խօսքը իրենց մասին է: իրար
երեսի նայեցան ու աւելի մօտ խմբուեցան:

— Այս, այս, սիրունիկներս: — ասում էր ծերունին: —
Քանի դուք ձեզ հեռու կպահէք ամենւին զարմանալի չի
լինիլ, որ պրուսացիները մեզ ծուռ աչքով մտիկ անեն:
Պէտք է փոքր ինչ քաղցր, մարդավարի Լինինք հետները:

— Ի՞նչ, նրանք պէտք է այդ շուն գերմանացիների հետ հաճոյախօսութիւնն անեն: — Ցղամարդկանց մէջ արտայայտուղ խուլ տրտունջը ցոյց էր տալիս, որ այս առաջար-կութիւնը մի առանձին հաւանութիւն չէր գտել:

— Իրաւ է ասում, — ասաց սեւը բռունցքով սեղանին խփելով, — մենք գայլերի նման վրայ կպոծնենք և մեր հարուածները նրանց բաղցր չեն թուլլ:

— Մանաւանդ որ հայրենիքի համար է, — լսում էր չորս կողմից:

— Այս, պէտք է կանսյը մեզ օգնեն, — որոշեց յանկարծընդհանուրի ձայնը, — նրանք պէտք է պրուսացիներին թա-կարդի մէջ ձգեն:

Մինչև այժմ կանսյը ականջ էին գնում այս խորհրդակցութիւններին ու խորամանկութեամբ իրար բրմբրլթում, բայց այժմ լսեցին — բանը լուրջ կերպարանք էր առնում:

— Կուզեինք ճշտի գիտենալ, թէ ի՞նչ է մեր անելի-քը, — ասաց մի գեղեցիկ, վայելչակազմ, համարձակ ու ծի-ծաղկու դէմքով կին:

— Քրանսուհի լինիս ու հարցնես թէ ի՞նչ պէտք է անել համելի լինելու համար, զարմացաւ անտառապահն ու խորամանկութեամբ նայեց խօսողին: — Շատ պարզ է՝ պրուսացիներին կդիմաւորէք, ուրախութիւն կը յայտնէք որ վերջապէս բազդ էք ունենում ի մօտոյ տեսնելու հըռ-չակաւոր ուրաններին, կաւելացնէք, թէ սկզբում նրանցից սաստիկ վախենում էիք, մինչդեռ այժմ տեսնում էք, որ շատ համելի մարդիկ են, անհամենաս աւելի համելի, բան թէ նրանցից առաջ եղող հետևակ զինուորները:

Մերունին միւնոյն ժամանակ այնպիսի ծիծաղաշարժ ծամածուութիւններ էր անում, որ լսող կանայք զուարժ զուարժ ծիծաղում էին ու ծափ տալիս: Ցղամարդկանց մռայլ դէմքերի վրայ ժպիտը խաղաց և յանկարծ ուրա-խութեան ծարաւը համակց բոլորին:

— Պարենք, պարենք, — լսում էր ամեն կողմից:

Մինչ սեղաններն ու աթոռները մի կողմ քաշքշելով պարի համար աեղ էին բաց անում, նորից հնչեց անտառա-պահի զօրեղ ձայնը:

— Մի բոպէ էլ, որդիքս, մի բոպէ էլ: Զեր այդ ցան-

կութիւնը մի բան ձգեց միտքս, — պրուսացիները, մանաւանդ սպաները երբէք առանց թուր ու ատրճանակի չեն դուրս դալիս, դա անյարմար հանգամանք է, երբ դուք ներս մըտնելիս կը լինիք: Մենք այնպէս կանենք, որ այն գեշերը, որ նրանք Ռուդոլֆի մօտ կհաւաքուին, պարեր լինին սարքած, նրանք պարելիս իրենց զէնքերը վրաներից հանած կը լինին, և մեր գործը կիսով չափ կատարուած կը լինի:

— Ո՞ւմ հետ են նրանք պարելու, — հարցրեց Ռուդոլֆը:

— Անշուշտ բո աթոռներիդ հետ չպիտի պարեն, հապա կանանց հետ, — պատասխանեց անտառապահը: — Կանայք պյնքան բարի կը լինին, որ ոչ բոլորը, այլ տասներկու հոգու չափ, կը գան այստեղ: Թող նրանք լաւ հագնուին ու աշխատին որքան կարելի է որամիտ ու հաճելի լինել. յետոյ կը սկսին որպէս թէ իրար մէջ գանդատուել, որ պարելու համար տղամարդիկ չկան, իսկ յետոյ — յետոյ կսկսեն պրուսացիների հետ պարել:

— Բայց չէ որ հէնց իսկոյն մեր վարմունքը աչքի կը ընկնի թէ որ առանց որ և է պատճառի հաւաքուելու վինիք այստեղ, — ասաց վայելչակազմ գեղեցկուհին: Խնչպէս երևում է նա բոլոր կանանց կողմից էր խօսում:

— Չատ ուղիղ նկատողութիւն է, սիրունիկս, — հաւանութիւն յայանեց անտառապահը: — Դրա համար էլ մենք գերմանացիներին կը պատմենք, թէ ընտանեկան հանդէս, տօն ենք կատարում Ռուդոլֆի մօտ... օրինակ, — նա այնպէս ձևացրեց, որպէս թէ մտածում է, — օրինակ հէնց ասենք նրա նշանադրութիւնն ենք կատարում:

— Տէր Ասառւած, բարձր ծիծաղելով ասաց Ռուդոլֆը, — ինձ ամուսնացնում ես, ծեր կաշաղակ: Նշանած էլ հօչեմ գտել ինձ համար:

Անտառապահը աչքը չորս բոլորքը դարձրեց և, իւր մօտ կանգնած Ռուդոլֆի թեւից բռնելով, խռպոտ, ձնշուած ձայնով ասաց.

— Իչ կաաս որ գտնեմ:

— Ո՞ւմը պիտի գտնես:

Ծերունին առանց խօսելու գլխով դահլիճի հանդիպակաց անկիւնը ցոյց տուեց:

Ռուդոլֆը բերանը լայն բաց արած ժպաաց: Բոլորի

աչքը ցոյց արուած կողմը դարձաւ և «Ուէյն Գիւյիօ» բառերը ամբողջ դահլիճի մէջ տարածուեց:

Ամբողջ ժամանակը Ուէյն Գիւյիօն ուշադրութեամբ ականչ էր դրել, ամբոխի մէջ չէր խառնուել, պյլ մի առանձին սեղանի մօտ նստած էր Բայց հէնց որ իւր անունը լսուեց, նա կարծես սարսափահար վեր թռաւ տեղեց և դէպի գուռը գնաց:

Այն ժամանակ մի կատաղի աղմուկ ու աղաղակ բարձրացաւ:

—Այնտեղից, որտեղ հայրենսասէրները Խորհրդակցում են, չեն հեռանալ, —կանչում էին տղամարդիկ:

—Թագուհի հօ չէ յիրաւի, մեղ նման մի հասարակ սահկանացու է, —ծաղրելով ասում էին կանայք:

Ըսդհանուրի խօսակցութիւնը մի այնպիսի սպառնական ձև ստացաւ, որ կինը ակամայ կանգ առաւ: Երեսը մեռելի գոյն էր առել և խոշոր թուլեա աչքերը ահաբեկուած շուրջն էին նպյուր:

—Յարգելի ժողովականները կարող չեն ինձ վատ հայրենսասէր համարել, —կամաց ասաց նա ժպտալ աշխատելով, —որ ես հարկադրուած եմ իմ անտեսական գործերս նայելու:

—Է՛՛, ի՞նչ անտեսական գործերի ժամանակ է, —ասաց սկ տակի մասխարան. —այժմ բանը անտեսութիւնը չէ, հապա հայրենիքը: Միթէ մենք ամենքս էլ անտեսական գործեր չունենք: Միթէ մենք ամեն բան թողած անտառ չհեռացանք:

—Ի հարկէ, ի հարկէ, —վրայ բերին բոլորը:

—Ի՞նչ կայ յուզուելու, որդիք, —հանդարտեցնում էր անտառապատճը: Հասարակութեան և Ուէյն Գիւյիօի միջև կանգնած: —Madame Գիւյիօն խելացի կին է և աղնիւ հայրենսասէր. ես այդ բոլորիցդ լաւ գիտեմ, որովհեաւ բոլորիցդ էլ մծ եմ, և նա կհասկանայ, որ մծ բան չէ երենից պահանջուածը: Միայն մի երեկոյ պէտք է պրուսացիների առաջ մեր քաջ Ռուդոլֆի խօսեցեալը ձևանայ: Այնպէս չէ՞ ու-ու Գիւյիօ:

Գիւյիօն գլուխը բաշ գցած լսում էր այս փաղաքշա-

կան խօսքերը։ Նրա կուրծքը ուժով բարձրանում էր ու ցածանում։

— Ինչու անպատճառ ես լինիմ, — կամաց հառաչեց նա։

— Որպէս զի պրուսացիները Ռուդոլֆի ճաշակի մասին լաւ գաղափար կազմեն, — ասաց անտառապահը բեները ձըդ-ձըդելով։

— Մէկ էլ այն պատճառով, որ Նորմանդիայից գուրս եկած ամեն մի բանի կարելի չէ վստահիլ, — չարախնդութեամբ նկատեց վայելչակաղմ գեղեցկուհին, որ Գիւիօի ամենաթունդ հակառակորդն էր, — և եթէ նրան շարունակ աչքի առաջ չունենաք, մէկ էլ տեսաք մի իրիկուն էլ գընաց ու ամենքիս պրուսացիներին ծախսեց։

Ուէյն Գիւիօն մռայլ, արհամարհական հայեացք ձգեց իւր հակառակորդի վրայ։

Ռուդոլֆը մօտեցաւ և կոպիտ վայելչութեամբ իւր աեռքը նրա ուսին դրեց։

— Դուք գիտէք հօ, ու-թո Գիւյիօ, — ասաց նա։

Ուէյն Գիւիօն զղուանքից ցնցուեց երբ որ նրա ձեռքը իւր ուսին զգաց։

— Մի կազիք ինձ, — յետ բաշուեց նա և ակամայ մի քայլ հեռացաւ։ Ռուդոլֆը յիմար արասյայտութեամբ, շշկուած մաց կանգնած։ Նորից աղմուկ բարձրացաւ, բայց այս անդամ աւելի սպառնալից։

— Ի՞նչ, անմերձենալի՞ է ձեւանում։ Զլինի՞ այն պատճառով է անում, որ պառաւ ժլասար տոպրակով փող է թողել իրան։ Ուզում է հասարակութեան կամքին հակառակել։ Դաւաճան, դաւաճան։

Աւելի յաճախ, աւելի սպառնալի կերպով հնչում էր այդ օրհասական խօսքը, և Ուէյն Գիւյիօն սարսափահար նկատում էր, թէ ինչպէս ամբողջ գիւղի հասարակութիւնը թշնամաբար էր վերաբերում դէպի իրեն։ Ճար չկար. պէտք է խոնարհէր։ Փոթորիկը խաղաղացնելու համար նա ձեռքը վեր բարձրացրեց։

— Ես հօ չեմ ասում, թէ չեմ ուզում, միայն այս կուզէի իմանալ, թէ այդ ամենը հօ միայն ձեմի համար է։ Եւ միւս օրը դարձեալ առաջուայ նման կըլինի։

— Զէ՞ ասացինք որ միւս օրը դուք դարձեալ ազատ

կըլմնիք, եթէ միայն Ռուդոլֆին չի յաջողուիլ ձեր դաժան սիրաը մեղմացնել, —պատասխանեց անտառապահը:

Ուեյն Գիւյիօն հօւա առւաւ իւր դժգոյն շրթունքները:
—Լաւ, —ասաց նա, —թող ձեր ասածը լինի:

—Այ ինչ եմ ասում, այդ լաւ է՝, —լսուեց չորս կողմից:

Հպարտ պյուի կնոջ Խոնարհ համաձայնութիւնը ընդհանուր հաւանութիւն գտաւ:

Պարը սկսուեց թէ չէ Ուեյն Գիւյիօն անձայն դուրս գնաց դահլիճից:

Մռայլ ամպերը մառախլապատ վարագուրի նման ծածկել էին ձմերային խոնաւ երկինքը, երբ Ուեյն Գիւյիօն, գիշերն անքուն անցնելուց յետոյ մօտեցաւ պատուհանին և դուրս նայեցաւ դէպի գիւղի դատարկ փողոցը: Նա պյօսօք առաջին անգամ էր նկատում այդ, թէև արդէն շատ աարի էր, որ մենակ էր ապրում: Որ գիւղացիք իրեն չէին սիրում, նա պյու գիտէր, բայց որ իրեն այդ սստիճանի ատելիս լինէին — այդ առաջին անգամ երէկ երեկոյեան հասկացաւ: Նա դեռ առաջ էլ մտածել էր կայքը ծախել և գիւղից հեռանալ, բայց թէ ուր, ինքն էլ չգիտէր: Իսկ պյօժմ պյու բանը կարելի չէր անել: Նախ և առաջ պէտք է կատարէր ինչ որ երէկ իրեն յանձնել էին: Բայց որ չէր մտածում թէ ինչ էր անելու, սիրաը ճմլում էր ու սառը դող անցնում ջանովը: Նա գնաց խոհանոց և սկսաւ նսանաշ պատրաստել, բայց պատրաստելուց յետոյ պատպա անգամ չառաւ: Երկար ժամանակ օջախի մօտ լուր նստած աչքերը սկսուած նայում էր առաջը: Մօտալուս փորձանքի մի ճնշիչ զգացում, կատարեալ մենակութեան և անօդնականութեան գիտակցութիւնը պաշարել էր նրան, և նա լուր լաց եղաւ՝ առանց իսկ արտասուբն արգիլելու փորձ անելու: Եւ դեռ երկար նստած էր նա այնաեղ անշարժ, կարծես արձան լինէր:

Յանկարծ փողոցի կողմից նրա ականջին աղմուկ, ձիանոնց դոփիին և զէնքերի շառաչման ձայներ դիպան: Սառը ցնցիւն անցաւ նրա մարմազ — ուլանները: Սկզբում ուզում էր նստած մալ, ոչինչ չէր ցանկանում ոչ տեսնել, ոչ լսել, և ամեն բան բաղդի բերմունքին թողնել: Բայց հետաքա՞ն առ 14

ապրբը ութիւնը երկիւղին յաղթեց. դուրս եկաւ խոհանոցից և մօտեցաւ պատուհանին, որ փողոցի վրայ էր բացւած:

Հէնց իւր առաջ մի խումբ կանայք էին կանգնած: Խնչպէս երեաց նրանք պատահաբար չէին հաւաքուած այդտաեղ, որովհետև հէնց այն րոպէին, որ Ռէյն Գիւյիօն պատուհանից երեաց, բոլորը միասին երեսները դէպի նրան դարձրին և ծաղրական եղանակով խոնարհելով գլուխ տուին: Նա պատուհանից հեռացաւ, բայց կանայք սկսան պատուհանը ծեծել: Կամայ ակամայ ստիպուած էր բանալ:

— Բարի լոյս, madame la Reine, — կանչեցին կանայք: — Եկել ենք մեր յարգանքները մատուցանենք ձեզ և յայտնենք, որ մենք ենք լինելու ձեր լնկերուհիները Ռուդոլֆի նշանադրութեան միջոցին:

Ռէյն Գիւյիօն առանց հետաքրքրութեան դիտում էր այդ դաստիրկախօսներին, բայց նրանց ծաղըը ուշաբերեց նրան: Նա պատուհանը փակեց ու ներս քաշուեցաւ: Առանց դադրումի նա յետ ու առաջ ման էր դալիս սենեակի մէջ ու ձեռները տրորում: զգում էր, որ ոչինչ ճարչունի, ամեն մի բայլափոխը շրջապատուած է լրտեսներով — չարացած կանանցով:

— Ի՞նչ եմ արել դրանց, — ցած ձայնով ասում էր նա ինքն իրեն գանգատուելով: — Ի՞նչ եմ արել: — Նա ըզգում էր, թէ ի՞նչպէս սյդ անարդար վիրաւորանքը իւր մէջ՝ դէպի իրեն հալածողները ատելութիւն էր ծնեցնում:

Իսկ ուլանների էսկադրոնը մօտենում էր և Ռէյն Գիւյիօն համարեա շիտակ նայում էր զինուորների երեսին: Տեսնում էր նրանց արեակեզ դէմքերը, վստահ և ուրախ աչքերը, որոնք համարձակ նայում էին փողոցի երկու կողմը ձգուած աների վրայ, և թէև նա սարսուռ զդաց տեսնելով նրանց փայլփող նիղակները, թէև երեակայում էր, թէ այդ սարսափելի նիղակները Փրանսիական արիւն են թափել, բայց և այնպէս չէր հեռանում պատուհանից: կարծես մի զօրեղ ոյժ կապել, կաշկանդել էր նրան այդտեղ: Նա չէր կարողանում իւր աչքը հեռացնել այդ դանդաղաբայլ շարժուող զինուորական խմբից, և բանի որ երեսում էին, նայում էր նրանց: Ակամայ նրա առաջ պատ-

կերացան ուրիշ կերպարանքներ, որոնց նա երևակայում էր այս անվլդով լուս մարդկանց կողքին, այն կերպարանքները, որոնց երեկ էր տեսել՝ այլանդակ դէմքեր, խռպոտ ձայներ, և նրանց ու սրանց իրար չետ համեմատելով Ռէյն Գիւյիօն ձեռքով ճակատը շփեց ու սարսափած իւր չորս կողմը նայեցաւ: Մենակ էր Կանայք արդէն վազուց վազել գնացել էին ուլանների ետևից: բայց յանկարծ կարծես նրան այնպէս թուաց, թէ երեկուայ խօսքն է լսում՝ դաւաճան:

Քառորդ ժամից նրա տան դուռը բաղիկեցին: Նա գուրս գնաց նախասենեակը, ինչ տեսնէ, — մի ուլան կանգնած է իւր առջևը: Ուլանը մի ձեռքով դրան կանթն էր բռնած, իսկ միւսով ձիու սանձը: Ռէյն Գիւյիօն չուած աչքերը սկեռել էր նրա վրայ: Զինուորի թարմ, զուարթ, ցըտից կարմրած պատանեկական դէմքը ուղիղ իրեն էր նայում:

— Մի վախենաք, աիկին, — ասաց նա, — շատ ցաւում եմ, որ ձեզ անհանգստութիւն եմ պատճառելու, բայց կաշխատեմ որքան կարելի է քիչ լինի այդ նեղութիւնը: Բարի եղէք ինդրեմ ասկը, ո՞րտեղ կարող եմ ձիս կապել:

Նա ազատ ֆրանսերէն էր խօսում, և եթէ Ռէյն Գիւյիօն փոքր ինչ հասկացողութիւն ունենար զինուորական նշանների մասին, այն ժամանակ զինուորի ուսադիրների գունաւոր երիզից կը ճանաչէր, որ իւր առաջ կանգնողը կամաւոր զինուոր է: Բայց նա բառ անգամ չկարողացաւ արտասանել: Գլուխը լուռ բաշ գցեց և զինուորին գլխով արաւ, որպէս զի իւր ետևից գայ ու նախ ինքը դուրս եկաւ դռնից: Ցան բակը կառք մտնելու մեջ դուռ ունէր, որ ետևից փայտէ սողնակով էր ամրացրած: Ի զուր աշխատում էր սողնակը յետ բաշել. փայտը խոնաւութիւնից ու ցըրտից ուռեւլ էր ու չէր շարժուում:

— Թոյլ տուէք ես բանամ, — ասաց ուլանը՝ նրա զուր ջանքերը տեսնելով: Նա էլ փորձեց, բայց սողնակն այնպէս ամրացած էր, որ ստիպուած եղաւ երկու ձեռքով աշխատել:

— Բարի եղէք, մի՛ բոպէ միայն ձիս բռնեցէք, — Էնդրեց նա:

Ուէյն Գիւյիօն ձիու սանձը ձեռքն առաւ և ձին անմիջապէս սկսաւ նրան հոտւղտալ: Գեղեցիկ, բարեկազմ ձի էր և ուշանի սեպհականը: Ուէյն Գիւյիօն նայեց կենդանու սիրուն, վատաշութեամբ իրեն նայող աչքերին և ակամյ ձեռքով նրա վիզ շցեց, բայց և իսկդյն ձեռքը յետ բաշեց, կարծես թէ այրուել էր կրակեց՝ չէ՞ որ դա պրուսացու ձի է:

—Վերջապէս, —ասաց ուլանը սոլյակը բաշելով: —Եթէ թոյլ կտաք, ես երկաթը փոքր ինչ կը եղեմ, ժանդուել է: —Նա յետ մղեց դռան մի փեղկը և լուռ տանտիկնոց ձեռքից առաւ ձիու սանձը:

—Ըստ շնորհակալ եմ, —ասաց նա սրտագին, —այս է ախոռը, այնպէս չէ՞:

Կինը գլխով արաւ:

—Արի, Էգմոնտ, —ասաց ուլանը իւր ձիու պարանոցը թօթուելով, —վաղուց է դու այսպիսի պատուական ախոռ աեսած չէիր, անպիտան:

Մինչ երիտասարդ զինուորը իւր ձիու թամբն էր վեր առնում, Ուէյն Գիւյիօն դրանը յենած դիտում էր նրան: Երիտասարդը հանեց իւր վերարկուն, վեր առաւ գլխարկը, և նրա վայելուչ, դիւրաթեք կազմուածքը շարժւում էր ճարպիկութեամբ ու արագ: Նրա խիտ, չէկ, թեթեակի ուռուած մազերն ընկել էին ճակատի վրայ:

—Այս մեծ գիւղ է, տիկին, —խօսում էր նա իւր գործըն անելիս, —արբայավայել տեղ ստացանք, համարեա ամեն մէկիս մի տուն վիճակուեց, որ շատ հաճելի բան է սանաւանդ, երբ շարաթներով գլխիդ վերել կտուր չես տեսնում: Թայց կարծում եմ, —շարունակեց նա առանց պատասխանի սպասելու, —ձեր հիւրասիրութիւնը մենք երկար չենք ի չարը գործ դնիլ: շուտով խաղաղութիւն կհաստատուի, մենք մեր տները կերթանք: դուք էլ կազատուիք պրուսացիներից:

«Նա ձիու վրայից նայեց իւր անխօս խօսակցին և, ծիծաղելով, աւելացրեց:

—Եւ այդ ձեղ մի այնքան էլ վեշտ չի պատճառիլ, այնպէս չէ՞:

Ուէյն Գիւյիօն դէմքը մի կողմ շուռ տուաւ:

—Պարոնը չի ցանկանաւ մի բան ուտել, —հարցրեց նա:

— Ո՛չ, թէ որ պյղբան բարի կը լինէք...

—Պարտականութիւնս է, —պատասխանեց կինը կարձ
ու կտրուկ:

Այժմ երիտասարդը լռեց, և երբ Ռէյն Գիշիօն մարկ
տուաւ, տեսաւ որ նա մինչև ականջի քոքը կարմրատակել
էր: Զինուորը բոլորովին կռացել էր դէպի իւր ձին, չետը
հանաքներ էր անում, փաղաքուշ անուններ տալիս, մսուրի
մէջ նրա համար ուտելիք պատրաստում: և աղնիւ կենդա-
նին կամացուկ նրինջում էր՝ որպէս թէ իւր տիրոջ գգուան-
քին պատասխանելով:

Ռէյն Գիշիօն դուրս եկաւ ախոռից, բայց բակի միջում
կանգ առաւ ու ետևը դարձաւ:

—Եթէ պարոնը..., —նա կանգնեց, — եթէ պարոնն ու-
զում է իւր սենեակը տեսնել...

—Ես յետոյ շնորհ կունենամ ձեզ պյցելելու, տիկին,
—նա աշխատում էր սանձը պատից կախել:

—Դուք հօ մի որեկից վիշտ չունի՞ք, —յանկարծ հար-
ցրեց նա իւր գործը թողած դէպի նրան դառնալով:

—Ինչից էք կարծում այդ, —ասաց կինը զարմացած
նպյելով:

—Օ՛չ, —պատասխանեց նա, —նրանից եմ կարծում, որ
ձեր դէմքը սաստիկ տխուր է թւում և այն մի այսպիսի
ժամանակի...: — նա լռեց ու կռացաւ դէպի սանձը, յետոյ
նորից նրան նպյելով աւելացրեց: — Ես կարծում էի, գուցէ
մի մարդ կորցրած լինիք:

Ռէյն Գիշիօնի դէմքը նախ պատի գոյն սաացաւ, ապա
սաստիկ կարմրատակեց, և այս նիստ փոփոխութիւնը հա-
մարեա վեհ գեղեցկութիւն տուեց նորան: Նա գլխով բա-
ցասական շարժում արաւ:

—Ես բանակի մէջ ազգական չունիմ, ուստի կորցնելու
մարդ էլ չունիմ:

Այս ասելով նա շտապով շուռ եկաւ և ներս մտաւ
խոհանոցը և հեռու մի անկիւն բաշուելով ձեռներով երեսը
ծածկեց: Նա կարիք էր զգում մի առ ժամանակ ոչինչ չը
տեսնելու, ոչինչ չը մտածելու: Յետոյ դէպի օջաղը գնաց
որ ճաշ պատրաստէ, բայց յանկարծ յիշեց, որ բակի մնձ
դուռը բաց է: Պէտք է փակելի Խնչու: Խնքն էլ չգիտէր,

թէ ինչու գնաց դուռը փակելու. բայց նրան թւում էր, որպէս թէ իւր տունը մի գաղանիք ունի պահած, որ ոչ ոք չզէաք է իմանայ, մանաւանդ նրանք, այդ զզուելի բամբասաւէր կանայք։ Նա ասես թէ մի վատ բան անելիս լինէր, ման եկաւ իւր տան բոլորը, բակի դռները կողպեց և, հաւաստիանալով, որ ոչ ոք իրեն չէ տեսնում, թեթև կրծքով շունչ առաւ։ Բայց ի՞նչ հարկ կար թագնուելու։ Ի՞նչ ունէր ծածկելու։ Ոչինչ։ Արդեօք մի այնպիսի բան էր պատահէլ, որ ինքն էլ պարզ հասկանում լինէր։ Ոչ, — բայց և այնպէս զգում էր, որ մինոր բան էր պատահէլ, մի մեծ, սարսափելի և տարօրինակ բան, որ առաջ չկար։ Բայց նա չէր հականում — ի՞նչ։ Մի տեսակ նոր, խորհրդաւոր զգացմունք էր ծնուել իւր մէջ։ Բայց եթէ մէկն ուղենար նրան բացադրել, թէ ի՞նչ զգացմունք էր պար, նա ամենակին լսել անգամ չէր ուզիլ, ականջները կիցէր։

Նա վերադարձաւ խոհանոց, պղինձները դիտեց և, կրկին մի անբացարելի անհանգտութեամբ պաշարուած, աստիճաններով բարձրացաւ վերևի յարկը, ուր ուլանի համար տեղ էր պատրաստած։ Նրա ամուսինը, արհեստաւոր Գիւիօն շատ քիչ նշանակութիւն էր տալիս կեանքի յարձարութիւններին, ևս առաւել չէր կամենում դրա համար ծախսեր անել։ Դա մի պարզ սենեակ էր և մէջը միայն անհրաժեշտ առարկաներ կային — մահճակալ, սեղան, երկու աթոռ։ Նա մի աչք ածեց սենեակի չորս բոլորքը և նկատեց, որ դուռը ոչ կողպէք ունէր, ոչ սողնակ։ Նա առաջներն այդ բանը չէր էր նկատել, որովհետև սենեակը պարապ էր մասցել, բայց այժմ մտախօս հութեամբ դրան կանթից բռնած յանկարծ յիշեց երեկ երեկոյեան ասուած խօսքերը, թէ պէտք է կանայք նախապէս հոգ տանեն, որ պոռասացիների քնած սենեակների դռները բաց լինին։ Աննկարագրելի սարսափը պաշրեց նրան։ Բաղդը ինքն էր այնպէս բերել, որ ուլանին յատկացրած սենեակը այսպէս յարմարեցրած լինէր պրուսացիներին անուելիք պէտշերային այցելութեանց համար։

— Այսպէս եղածը չգիտէի, — կամաց ասաց նա, ասես թէ ուզում էր ինքն իւր առաջ արդարանալ։ Բայց մինչ նա մտածում էր թէ կարելի չէ արդեօք ուլանին մի ուրիշ սենեակ տեղաւորել, աստիճանների վրայից ուրքի ձայներ լը-

սուեցին և իւր նոր անկեցը հանգնեց իւր առաջ:

Զինուորը իւր տանտիրում էու տարօրինակ արտայայ-
տութիւնից շփոթուած, լուռ նայում էր նրան.—Ռէյն Գիւ-
յիօն ձեռները յուսակառուր ցած թողած, յենել էր պատին
և սարսափահար նրան նայում: Բայց երիտասարդը շուտով
ուշքի եկաւ, վերջին աստիճաններն էլ բարձրացաւ և սե-
նեակը ցցց տալով հարցրեց:

—Ա՞յս է ինձ յատկացրած սենեակը:

Կինը գլուխը անխօս քաշ ձգեց: Ուշանը յապաղում
էր ներս մտնելու:

—Ինչպէս երեսում է այս բանը շատ ծանր է գալիս
ձեզ, ասաց նա:

Կինը գլխով բացասական շարժում արաւ:

—Այս սենեակը... շատ անյարմար է, — ասաց նա կա-
կաղելով:

—Է՛՛, այդ կողմից հանդիսա կացէք, — ասաց ուղանը,
զինուորի համար դա ոչինչ նշանակութիւն չունի: Մահմա-
կալ, աթոռ և սեղան, որի վրայ կարելի է նամակ գրել:
Էլ բնչ եմ ուզում: —Եւ նա ներս մտաւ:

—Հապա՞ եթէ նկատի, որ գուռը կողպելու բան չու-
նի, — մտածում էր կինը խղճահարուած: Բայց զինուորը ո-
չինչ ուշադրութիւն չդարձրեց դրան վրայ և իւր բոլոր ի-
րերը ներս բերեց:

Ռէյն Գիւյիօն լուռ դիտում էր նրան, — նա հանգիստ,
պարզութեամբ ու զուարթութեամբ կարգի էր բերում իրե-
րը: Պարզ էր, որ կասկածի նշոյլ անգամ չունէր: Ա՛՛ թէ
կարողանար նախազգացմամբ իմանալ, որ այս սենեակը իւր
գերեզմանն է լինելու: Երնէկ ինքը կարող լինէր նրան այդ
բանն ասել: Նա ակամայ բաց արաւ իւր շրթունքները, բայց
սարսափելով նորից հուպ տուաւ...: «Դաւաճան» շշնչաց
նրան ներքին մի ձայն:

Վերջապէս զգաց, որ իւր այդտեղ կանգնելը անյար-
մար է, կարծես թէ հետեւում լինէր նրան:

—Ճաշը շուտով պատրաստ կըլինի, — ասաց նա, — պա-
րոնը չէ՞ր ցանկանալ կէս ժամից ներքեւ իշնել:

—Լաւ, պատասխանեց նա, — հազիր մինչ այդ՝ նամակս
էլ կը գրեմ:

Այս ասելով նա ցոյց տուաւ կանաչ ժապաւէնով կապած մի ծրարթ:

—Թանկագին նամակներ են, պատերազմի ժամանակ եմ ստացել, աւելացրեց նաև:

—Երևի ձեր գիւղից եք ստացել, —հարցրեց կինը: Երեսասարդը բաղցրութեամբ ծիծաղեց տեսնելով, որ նա գիւղացու աեղ է դնում իրեն:

—Ես բաղաքացի եմ, իսկ նամակները մօրիցս ու փոքրիկ բրոջիցս եմ ստանում:

—Եւ նրա ազբերը խաղաղ խնդութեամբ նայում էին թանկագին առղերին:

—Գիւղից, աիկին, —շարունակեց ուլանը. —այս ժապաւէնը փոքրիկ բոյրս ստիպեց որ վերցնեմ, որովհետեւ կանաչ գոյնը —յուսոյ գոյն է: Ի հարկէ, նախապաշարմունք է դա, բայց զարմանալին այն է, որ այդ բանը արդարացաւ: Այնպիսի օրեր են պատահել, որ երեկոյեան նայում էի վրաս ու զարմանում, թէ ի՞նչ հրաշքով եմ պրծել: Եւ, երեսակայեցէք, չեմ կարողանում պյդ նախապաշարմունքից ազատուել: Ասենք այժմ արդէն վասնգն անցած է, շուտով խաղաղութիւն կհաստատուի:

Եւ թեթևացած հոգոց հանելով ծրարը սեղանի վրայ դրաւ: Ուէն Գիւյիօն մեխուածի պէս դեռ կանգնած էր շէմքում: Ուլանը նայեցաւ նրան և նորից ապշեցաւ տեսնելով, թէ ինչպէս իւր տանտիկնոց ազբերը սարսափահար իրեն էին յառած: Նկատելով՝ ուլանի շփոթութիւնը, կինը գլուխը ցած թողեց և առանց կապի տասաց.

—Ի հարկէ... ի հարկէ... այդպէս է...: պարոնը նեղութիւն կըքաշէց ցած գալու:

—Երբ և ուր կկամենաք, —պատասխանեց նա յարդանօք գլուխ տալով:

Եթէ խոհանոցու, Ուէն Գիւյիօն աեսնող լինէր, պիտի կարծէր, թէ այդ կինը քնած աեղն է ման դալիս ու շարժւում: Նրա ականջը լցուած էր աղմուկ-աղաղակով և պյդը ընդհանուր խառնաշփոթութեան միջից պարզ լսում էր միայն ճմայրս ու փոքրիկ բոյրս՝ խօսքերը: Եւ յանկարծ միտրորինակ միտք ապշեցրեց նրան՝ երնէկ ինքը նրա մայրը լինէր: Մի աննկարագրելի բաղրը զգացմունք համակեց նը-

րան։ Հրաշալի պատկերներ են բացւում նրա առաջ։ Այս-
տեղ վերևում նա անհանգստութեամբ սպասում է իւր որ-
դուն։ Իւր փոքրիկ աղջիկը, նրա քսրը, դեպի բակի դուռը
ընդ առաջ է վազել։ ահա լսում է ոտքի ձայները և
զգում է, թէ ինչպէս մի դողոց անցաւ իւր մարմով, երբ
նորա ոտքի ձայնն առաւ, ահա աստիճանների վրայ երևում
է նրա գլուխը, երկու ոստիւն էլ և նրա գլուխը իւր կրծքի
վրայ է, այդ գեղեցիկ, նորատի, բազցր դէմքը և և ինչպիսի
ագահութեամբ համբոյրներ է տակիս այդ մազերին, աչքե-
րին, ինչպիսի խանդով գտում, գրկում է։ Ուկյն Գիւին
անգիտակցաբար ձեռները վեր բարձրացնեց և խոր թառանչ
բաշելով նորից վայր թողեց։ Ահաւասիկ իւր սիրուն որդին
ուշադրութեամբ, մեզմ ժպիտը երեսին նայում է իւր աչ-
քերին և ասում։

—Վիշտ ունիս, մայրիկ, —բոլորովին այսօրուայ պատա-
հածի նման։

Եւ նա ձեռները սեղմեց սրախն, ուր այժմ մի տեսակ
ջերմ, երանաւաւէտ զգացմունք էր զեղուած, ասես թէ արե-
գակի ճառագայթը թափանցել էր այնաեղ ու սրաի սառը
հալել։ և այդ պատահեց այն միջոցին, երբ զինուորը ասել
էր. «Դուք վիշտ ունիք, տիկին»։ Այս բարեկամական, սըր-
տագին ձայնը նրա հոգու խորքն էր թափանցել։

Նա գլուխը թօթուեց, ձեռքով ճակատը շփեց, կար-
ծես աշխատելով մի անիրագործելի միտք վանել իրենից։ —
«Պրուսացի» շնչաց նա գործի ձեռք տալով։

Նա սկսաւ յիշել այն ամեն սարսափելի բաները, որ
լսել էր ուլանների մասին, յիշեց թէ ինչպէս առաջ միմիայն
ուլանի անունը լսելիս մի այնպիսի բան էր զգում, որ կար-
ծես գաղանների և ոչ թէ մարդկանց մասին է խօսքը։ Նա
երեկ երեկոյեան նոյնպէս անվրդով ականջ էր դնում ուլան-
ներին ոչնչացնելու ծրագրներին։ Այն ժամանակ նրան բո-
լորովին բնական էին թւում անտառապահի խօսքերը, թէ
«Փոշիի պէս պէտք է նրանց ջնջել երկրիս երեսից»։ Այս,
այդպէս ասաց նա, և երեւակայութիւնը կրկին անակնկալ
կերպով, ակամայ, մի նոր տարօրինակ տեսարան է պատկե-
րացնում նրա աչքերի առաջ՝ առաջ՝ առաջ՝ առաջ՝ առաջ՝ առաջ՝
գորը։ Ինչպիսի մատահոգութեամբ սպասում է իւր որ-

գու վերադարձին։ Բոլորը վերադարձան, բայց նա դեռ չը-
կայ։ Սակայն նա պիտի վերադառնայ, այդ գիտէ ինքը, ո-
րովհետեւ պատերազմի մէջ սպանուած չէ, հիւանդանոցում
մեռած չէ։ Եթէ մեռած լինէր վաղուց յայտնած կլինէին։
Բայց ուր է...։ Ուէյն Գիւյիօն գլուխը օրօրեց...։ Երկրի
երեսից ջնջուած է, անհետացել է...։ գերեզմանի հետքն ան-
գամ չկայ, որտեղից պիտի կարողանան գտնել։ Ուէյն Գիւ-
յիօնին այնպէս էր թւում, որպէս թէ անշանօթ կնոջ հետ
խօսում էր, երևակայութիւնը նրան աւելի ու աւելի հե-
ռուն էր տանում. — ահա նրա մայրը հեռու աշխարհից ե-
կել է այստեղ։ Նրան ասել են, թէ վերջին անգամ որդուն
այս գիւղում են տեսել և նա աննկուն փնտրում է նրան
ամեն տեղ։ Ուէյն Գիւյիօն պարզ լսում է, թէ ինչպէս վե-
հերկու ու կամաց բաղկում են իւր դուռը։ Գիտէ թէ ով-
է դուրսը սպասում։ Նա կընսաի անկեանը, ինչպէս այժմ
է նստած, և ձայն կտայ. ամտէք։ Նա շէմբում տեսնում
է մի կին իւր փոքրիկ աղջկայ ձեռքից բռնածի Երկուսն էլ
սևեր են հագած, երեսներին դոյն չկայ և տիսուր։ Նա գի-
տէ, ինչ է հարցնելու իրեն այդ կինը, բայց այնպէս է ձեւա-
ցնում, որպէս թէ ոչինչ չգիտէ։

— Արդեօք կարող չէ՞ր իմ որդու մասին մի տեղեկու-
թիւն հաղորդել ինձ. մի բան չգիտէ՞ք արդեօք, — պարզ լը-
սում է նա այդ վեհերկու, դողդոշուն ձայնը, տեսնում է
փոքրիկ աղջկայ աչքերը, որ հետաքրքրութեամբ նայում են
իրեն։

— Ոչ, տիկին, ոչինչ չգիտեմ, — ասաց նա յանկարծ բար-
ձըր ձայնով, կարծես զառանցանքի մէջ, — ոչ տիկին, բոլորո-
վին ոչինչ չգիտեմ։

Այս ժամանակ նրա փոքրիկ բոյրը սկսում է նկարա-
գրել իւր եղար կերպարանքը, — շէկ մաղեր, կապոյա աչքեր...
բայց նա չի թողնում, որ փոքրիկ աղջիկը իւր նկարագրու-
թիւնն աւարտէ. անկարող է այլ ևս դիմանալ։ Եւ ահա
տեսնում է նա մօր դէմքի յօւսահատ արտայայտութիւնը,
դառն արտասուքի կաթիւները սլոռն ոլոռն գուրս են գա-
լիս նրա աչքերից, և երկուսը միասին դանդաղ բայլերով
հեռանում են՝ փշրուած որտով. իսկ ինքը դրան ետևեց դի-
տում է նրանց մինչեւ որ աչքից անհետանում են։ Ապա վա-

զում է ախոռ, ուր որ պյսօր Խօսում էին իրար հետ, վեր է ընկնում յուսահատ և համբուրում այն տեղը, ուր նա պյսօր կանգնած էր, և ինչպէս պիտի փափագի գէթ մի անդամ էլ տեսնելու նրան, միայն թէ տեսնելու այն օրը, երբ նա կեանքով ու խանդով լի կանգնած էր իւր առաջը: Բայց երբէք, երբէք չի լինիլ այդ... բակի մէջ մի գերեզման կայ—մի խորը փոս, ուր նա պառկած է հեռու հայրենիքից, հեռու մօրիցն ու փոքրիկ քրոջից: Նրա տակ պառկած է իւր ձին, այդ հրաշալի աշբերով գեղեցիկ և հաւատարիմ կենդանին: Երկուսն էլ անհետ ջնջուած են երկրի երեսից...: Ուշ Գիւյիօն ձեռներն իրար խփեց. ու դառնապէս լաց եղաւ: Յանկարծ նա ոտքի ձայներ է լսում աստիճանների վրայ: Աստուած իմ, այդ հօ նահէ, կենդանի է: Ի՞նչ սարսափեց ի երազ էր այս...: Նա վեր թռաւ տեղից, աշբերը սրբեց և երբ նրա շէկ գլուխը երևաց դռան մէջ ու քաղցրութեամբ հարցրեց՝ կարելի՞ է մանել,—նրան այնպէս թուեցաւ, թէ արևի ճառագայթ ընկաւ իւր հոգու մէջ:

—Այս բոպէիս, այս բոպէիս,—ասաց նա և նրա ձայնը համարեա ուրախ էր հնչում: —Խնդրեմ գնացէք ներս, —և նա միւս սենեակը ցոյց տուաւ, —այս բոպէիս սեղանը կը պատրաստեմ:

—Ի՞նչ, ձե՞ր սենեակում, —համեստութեամբ հարցրեց նա:

—Ի՞նչ վնաս: Հօ չեմ կարող քեզ խոհանոցում ստիպել ճաշելու:

Նա առանց հակածառելու ներս գնաց: Տանտիկինը սեղանը շտապով սենեակի մէջտեղը քաշեց, վրան մաքուր սփռոց փռեց և մի հոգու բաժին դրեց:

—Մի բոպէ էլ, պարոնը հօ չի՞ մերժիլ իմ մառանի գինուց մի շիշ խմել: —Նա դուրս գնաց և շուտով փոշոաշեց ձեռին մտաւ ներս: Նա շտապելով կարմրատակել էր, գլխին կապած էր նոր գլխանոց, և այժմ երիտասարդի առաջինը կատարեալ ֆրանսուհի էր—զմայլելի, ճարպիկ և նազելի:

Երիտասարդը հրապուրանքով դիտում էր նրան: Ուշ Գիւյիօն զգաց իւր թողած տպաւորութիւնը, և իւր ժպիտը

ծածկելու համար դէպի դարագը կռացաւ՝ որպէս թէ բաժակ հանելու համար:

— Ոչ, տիկին, մի բաժակ էլ հարկաւոր է, — ասաց նա երբ աիկինը սեղանի վրայ մի բաժակ դրեց մայն: — Մեղանում Գերմանիայում սովորութիւն է, որ տանուաէրը հիւրի հետ բաժակները կը ըսկացնէ:

— Իրա՞ւ: Լաւ եթէ պարոնն այդ ուզում է... — և նա երկրորդ բաժակը բերաւ:

— Այժմ ապօւր — թոյլ կտա՞ք, — այս ասելով տանտիկինը մի աման լիբը ապօւր տուաւ ու կանդնեց նրա աթոռի մօտ:

Երիտասարդը վեր կացաւ և նրա համար էլ աթոռ բերաւ:

— Մինչդեռ ես նստած եմ, դուք հօ չէք կանգնելու, — ասաց նա:

— Բայց ես պարտաւոր եմ ձեզ ծառայել...

— Ճշմարիտ ախորժակս կփախչի, թէ որ ինձ չընկերակցէք:

Տանտիրուհին նստեց և, մինչ հիւրը իւր ապօւրն էր ուտում, նայում էր նրան: Նրան այնպէս էր թւում, թէ եթէ յաւիտեան նայելու լինէր՝ նայելուց զպիտի կշտանար: Այնուհետեւ նա երկրորդ տեսակ կերակուրը բերեց՝ աշխատելով աւելի ու աւելի եռանդով ծառայել նրան: Երիտասարդը նկատելով, որ գինու շեշը բացած է և բաժակները լցրած մուլ են, բաժակն առաւ ձեռքն ու ասաց:

— Թոյլ կտա՞ք աիկին, որ բաժակներս չընկացնենք:

Տանտիրուհին, առանց նրան նայելու, վեր առաւ բաժակը:

— Ո՞ւմ կենացը կը պատուիրէք խմել, — հարցրեց երիտասարդը:

Ուշյն Գիւյխօն մի փոքր ժամանակ լրւու մասց:

— Եւր մօր կենացը, — կամացուկ ասաց նա նրա երեսին նայելով:

— Եւ մի ումզ էլ, — շտապով վրայ բերեց նա, — ձեր փոքրիկ քրոջ կենացը:

Զինուորականի դէմքը կենդանացաւ և տանտիրուհին

զգում էր, թէ ինչպէս նրա ձեռքերը սեղմում էին իւր ձեռքը:

— Որքա՞ն բարի էք, որքա՞ն շնորհակալ եմ ձեզանից: — Ուշանի ձայնը դոզդողում էր, աչքերը արտասուժով լը- ցուել: Նա կռացաւ և համբուրեց նրա ձեռքը: Կինը իւր ձեռքի վրայ նրա ջերմ շրթունքներն զգալով, յետ ընկաւ աթոռի մէջքին:

— Ա՞հ, Աստուած իմ, — հառաչեց նա և սենեակից դուրս փախաւ:

Զինուորը իւր ճաշը մենակ վերջացրեց: Մի քիչ յետոյ Ռէյն Գիւյիօն նրա ոտների ձանը արտաքին դրան մօտ լը- սեց: Նա դուրս եկաւ:

— Գնում էք, հարցրեց նա:

— Գնում եմ զինուորների ստուգութեանը ներկայ լինելու, — ասաց նա: — Երկարի բան չէ, շուտով կը վերա- դառնամ:

Նա ինքն էլ չգիտէր, թէ վերջին խօսքն ինչու աւե- լացրեց, բայց կնոջ դէմքը մի այնպիսի տարօրինակ արտա- յայտութիւն ունէր, որ անհրաժեշտ համարեց նրան հան- դըստացնել և, զինուորաժողովի գնալիս, ճանապարհին բո- լոր ժամանակ այդ մասին էր մտածում:

Արդէն մութն էր որ վերադարձաւ: Ռէյն Գիւյիօն լամպարը վառած աշխատում էր, բայց նրա մաքերը աշ- խատանքի վրայ չէին: Նրա ականջը ձայնի էր և երբ դրան թրխկոցը լսուեց, փոքր ինչ հանգստացաւ:

Նա լսում էր, թէ ինչպէս իւր երիտասարդ հիւրն անցնում էր միջանցքով և երբ իւր դրան մօտեցաւ, բայլե- րը դանդաղեցրեց: Երկում էր, որ ներսը լամպարի լոյս տեսնելով վարանում էր մտնի՞ թէ ոչ: Անշարժ, համարեա շունչը կտրած նստել էր տանտիրութին: Վերջապէս երի- տասարդը բարձրացաւ իւր սենեակը և ոտի ձայներն ար- դէն վերևիցն էին գալիս: Ռէյն Գիւյիօն անմիջապէս գնաց դէպի դրսի դուռը, փակեց, բանալին երկու անդամ պար- տացրեց, ու դրան կանթից բռնած պինդ ձիգ տուեց որ- պէս զի համոզուի թէ պինդ է փակած, բաշեց, անցկաց- րեց երկաթէ սողնակը, և յետոյ միայն հանգստացաւ:

Մի քիչ յետոյ նա աստիճանների վրայ նորից լսեց նրա

դանդաղ և անվճռական բայլերի ձայնը: Գործը նրա ձեռ-
քից վայր ընկաւ: Անկասկած իւր մօտ էր գալիս: Նրա ձայ-
նը դողդողաց, երբ զինուորը դուռը բազմեց և նա ասաց:

—Մաէք!

—Ներեցէք, որ այսպէս անժամանակ ձեզ անհանգըս-
տութիւն եմ պատճառում, բայց ես հարկ եմ համարում
ձեզ իմ շնորհակալութիւնո յայտնելու:

‘Նա ծիծաղում էր, բայց բռնազրոսիկ էր պյտ ծիծա-
ղը. իսկ դէմքը առաւօտուայ նման շփոթութիւն էր ար-
տայայտում:

Ուէյն Գիւիօն աչքերը վեր չբարձրացրեց:

—Ի՞նչ բանի համար:

—Որ դուք սենեակս այնպէս լաւ վառել տաքացրել
էք և, բացի դրանից, սեղանիս վրայ պատրաստ ընթրիք
գտայ: Դուք ինձ համար աւելի էք անում, բան թէ կը
համարձակուէի յուսաւ:

—Է՛հ, շնչաց կինը առանձին ջանքով իւր ձեռի
գործը շարունակելով:

Երկար լրութիւն տիրեց, այն րոպէներից մէկը, երբ
կամ բոլորովին չնչին բաների մասին են խօսում, կամ ճար-
տարախօս լրութիւն պահպանում: Վերջապէս ուշանը լը-
ուութիւնն ընդհատեց:

—Ուղիղ ժողովասեղից եմ գալիս: Մեր ուլանները
ապշած են՝ այսաւել գալիս մենք ճանապարհին հանդիպե-
ցինք ձեզ մօտ բնակութիւն հաստատած գումարատակին: մեզ
ասել էին, թէ այսաւեղի կանայք թթուած են և անբարե-
համբայր, մինչդեռ ընդհակառակն...՝ և նա լրեց:

Ուէյն Գիւիօն հարցական հոյեացը ձգեց նրա վրայ:

—Մերոնք յափշտակուած են: Նրանք ոչ մի տեղ պյո-
ւան բաղրաբարոյութիւն ու գեղեցկութիւն չեն գտել:

—Իրա՞ւ: Եւ նա ձեռքից վեր գցեց աշխատանքն ու
աչքերը գետնին յառեց: Նրա կուրծքը ուժգին ելևէջ էր
անում: Զինուորը նրա յուղումը նկատեց:

—Ձեզ համար հօ անհաճոյ չէ՞ իմպատմածս, —հարց-
ըց նա:

—Ինձ ի՞նչ թէ ի՞նչպէս են այսաւեղի կանայք, —պա-
տասխանեց նա և շրիսկալով փակեց պատուհանի տախտակ:

փեղիերը նրա դէմքը մթագնեց, ձայնն էլ խուլ էր հընչում:

— Ես ուզում էի ձեր հայրենակիցների մասին մի համելի խօսք ասել, — կարծես թէ արդարանալ ուզելով նըշկատեց ուղանը:

Այս խօսքերի վրայ Ուէյն Գիւյիօն փետացած մասց կանգնած։ Նրա դէմքը մի պյանիսի արտայայտութիւն ստացաւ, որ կարելի չէ նկարագրել՝ ժպիտն ու զարմացը, սարսափն ու անձնուիրութիւնը խառնուած էին իրար։ իսկ այդ ամենի վրայ ընկած էր խորին, մռայլ վշտի ստուերը։ Նա դանդաղաբար աչքն ուղղեց նրան ու մի երկար և խորիմաստ հայեացըով նայեցաւ վրան։

Ուշանը ցնցուեցաւ, Ուէյն Գիւյիօն յանկարծ այլակերպեցաւ։ Դա այլ ևս այն պարզ ու խելացի գեղջկուհին չէր, այլ մի վեհապանծ կին, մի դիւթիչ ու հակակրական, հպարտ և ոգով զօրեղ երկրի մարմացումն։ Երիտասարդը բոլորովին մօտեցաւ նրան և ցած ձպյով հարցրեց։

— Դուք բարկանում էք վրաս։

Ոչ մի ձայն և ոչ մի շարժում երիտասարդն աւելի ևս խոնարհեցաւ դէպի նա։

— Ո՞րքան գեղեցիկ էք, — շշնչաց նա և յանկարծ նրա շրթունքները կպան Ուէյն Գիւյիօնի պյտերին։ Մարմիթարմութիւնը արբեցրել էր նրան։ բայց երբ կնոջ կրծքից մի խորին թառանչ դուրս թռաւ, նա շիոթուեցաւ և յետքաշուեց։ Կինը անշարժ կանգնած էր։ Ուշանը կրկին կռացաւ դէպի նրան, և կնոջ ձեռներն ընկան երիտասարդի ուսերի վրայ։ Նա իւր դէմքը մօտեցրեց, նրան, բայց կրկին գլուխը յետքաշեց, ասես թէ մի անընկճելի զօրութեան դէմ կուր մղելիս լինէր, յետոյ նրա գլուխը խոնարհեցաւ և շրթունքները թեթևակի, որպէս շունչ, հպեցան ուղանի շրթունքներին։ Բայց և անմիջապէս յետ մղեց նրան, մի ձեռքով ծածկեց երեսը, իսկ միւսով նշան արեց — հեռացէք, հեռացէք։ Եւ նա հեռացաւ։

Յաջորդ օրը ուղանը միայն ճաշին վերադարձաւ ծառայութիւնից։ Ուէյն Գիւյիօն գեռ չէր տեսել։ Խոհանոցի մօտով անցնելիս կինը նրա ետևից կանչեց, որ ուզղակի իւր

սենեակը գայ, որովհետև ճաշը պատրաստ էր և սեղանը ձգած:

Երբ Ռէյն Գիւխօն ամանով ապուրը ձեռին ներս մը-
տաւ, նա մտախոչ կանգնած էր պատուհանի առաջ և
դուրս մտիկ տալիս: Տան տիրուհու ոտների ձայնն առնելով
նա շտապով շուռ եկաւ և գլուխ տուեց, բայց այդ գլուխ
տախ այսօր աւելի պաշտօնական ձևով էր, քան թէ երէկ,
և հարցական հայեցքով նայում էր նրան: Մինչև անդամ
երբ Ռէյն Գիւխօն նստաւ իր կողքին, նա մտախոհութեամբ
լուռ էր մոռման: Կրկին պատուհանից նայելով գլխով ցաց
տուաւ սրճարանն ու հարցընեց:

— Այս է Ռուդոլֆի սրճարանը:

Ռէյն Գիւխօն ներբուստ ցնցուեց:

— Այո՛: Եետոյ ի՞նչ:

— Լսեցի, սպաները խօսում էին: Նրանք երէկ այն-
աեղ են եզել, իսկ այսօր զինուորների ստուգութիւնը կա-
տարուելուց առաջ մի ծերունի ինենդուլիկ, կարծեմ անտա-
ռապահ է, եկաւ և բոլոր սպաներին հրաւերեց, որ վաղը
Ռուդոլֆի մօտ երեկոյթի գան:

— Վաղը, — ընդհատեց Ռէյն Գիւխօն նրա խօսքը:

— Այո՛, ես նրանց բոլոր խօսածը լսեցի: Որքան հաս-
կացայ այնտեղ տօնախմբութիւն է կատարուելու, լինելու
են նաև կանայք..., նա իւր ապսէի մէջն էր նայում, —
ձեր անուն էլ տուին:

Ռէյն Գիւխօն լուռ էր: Նա զգում էր, թէ ինչպէս
իւր ներսում ամենայն ինչ սառչում էր: Նսկ երիասարդը
երեսը մի կողմ շուռ տալով շարունակեց:

— Նկատում են, որպէս թէ նշանախօսութեան հան-
դէս է կատարուելու և... որպէս թէ դուք — Ռուդոլֆի խօ-
սեցեան էք:

‘Նորից երկար լուռթիւն տիրեց:

— Ասենք թէ հէնց ուղիղ էլ է, յետոյ ի՞նչ, —
ասաց Ռէյն Գիւխօն գրգռուելով, — ո՞վ ինչ կարող է
ասել:

— Օ՛չ... ի հարկէ ոչինչ, — կմկմաց ուլանը: Եետոյ
աշխատելով անտարբեր ձևանալ, շարունակեց: — Ես այսօր
առաւօտեան այնտեղ, սրճարան դրանը տեսայ մի մարդ, ա-

ուատօրէն սկ ու Խիտ մազերով ծածկուած... Այդ է պ.
Ռուգօլֆը:

— Ինչպէս նկարագրում էք, հենց ինքն է:

Երիտասարդը անխօս նրան նայեցաւ: Կինն այդ հայ-
եացքին չդիմացաւ, նրա աչքի մէջ նա պարզ պս հարցն
էր կարդում. ևի՞թէ կարեցի բան է»:

Այնպիսի վայրկեան էր պատահում, որ նա պատրաստ
էր նրան գոչելու, թէ այդ ամենը խարէութիւն է, երբէք
չի կարող ինքը Ռուգօլֆի նշանածը լինել, բայց նոյն ժա-
ման էլ հասկանում էր, թէ այն ժամանակ ստիպուած պի-
տի լինի ամեն բան պատմել, ամեն բան երևան հանել, իսկ
այդ անհնարին էր Եւ հակասական զգացմունքներից տան-
ջուած վազեց դուրս գնաց սենեակից՝ թողնելով նրան զար-
մացած:

Այդ ամբողջ օրը նրանք իրար չտեսան. իրարից նոյս
էին տալիս: Երիտասարդը կարծում էր, թէ նրա բոլոր
տարօրինակ վարմունքի դաշտնիքը դաել է՝ նա իւր հար-
ցական հայեացքից վախենում էր:

Նրա խօսքերից կինը հասկացաւ, որ օրհասական ժա-
մը մօտեցել է: Սարսափելի դիշեր էր, որ նա' անցկացրեց:
Քնել չէր կարողանում, բայց երկար տանջուելուց կիսամո-
ռացութեան մէջ ընկած՝ սարսափելի տեսարան ներկայացաւ
իւր աչքերին. — նա տեսնում էր Ռուգօլֆին ներս մտնելիս՝
մի ձեռին ճրագ և միւսը դանակ. Խիտ սկ մազերը ընկած
էին ճակատի վրայ. նրա լուսաւորուած վայրի դէմքն այ-
լանդակուած է:

— Վերևո՞ն է, — խռպոտ ձայնով հարցնում է նա և
վայրի կատուի նման դէպի աստիճանները վազում:

« Նա տեսնում է, թէ ինչպէս Ռուգօլֆը կամացուկ
բաց է անում նրա սենեակի դուռը, այդ սարսափելի սող-
նակազուրկ դուռը, կանգնում շէմքումը՝ իւր շուրջը դիտե-
լով և մի ոստիւնով թռչում է մահճակալի վրայ: Նա լը-
սում է խուլ, խեղդուած տնքոց, տեսնում է, թէ ինչպէս
Ռուգօլֆը իւր արիւնաներկ դէմքը բարձրացնելով կատաղա-
բար շշնչում է իրեն դառնալով. Ծո՛ռ սիրում էիր նրան,
սիրում էիր և ամեն մի ասածին դանակը Թրպրացող դիա-
կի մէջ նրում:

Սառը քրտինքով պատած, սարսափահար ճիշ արձակեց նա և վեր թռաւ անկողնից: Մեռելային լուռեթիւն էր տիրել տանը, փողոցում, բայց երազն այնքան սարսափելի էր ու կենդանի, որ նա գողդոջուն ձեռներով լամզաբը վառեց և հենց այդպէս էլ, ինչպէս որ կար, բորիկ ոտներով անից դուրս եկաւ որ տեսնէ, թէ ամեն բան կարգին, ապահով է. բայց բակում ամեն ինչ խաղաղ էր՝ մեծ դուռը փակած, սողնակը տեղը պնդացրած: Ներս մանելը անկարելի էր. բայց նրան թուաց, թէ այդ քիչ է. նա աստիճաններով վեր բարձրացաւ, ուշանի սենեակի դրանը ականջ դրեց: Նրա սիրան այնպէս բարախում էր, որ սկզբում միայն այդ էր լսում: Փոքր ինչ հանգստանալուց յետոյ լսեց նաև քնած զինուորի խաղաղ շնչառութիւնը:

— Դեռ չէ, — շնչաց նա իւր սենեակը դառնալով, զգալով, թէ ինչպէս վախիցը ձեռները սկսել էին սառչել: Վերջապէս սովորական օրուայ դժգուն լոյսն ընկաւ ուէյն Գիւյխօի սենեակը և լուսաւորեց նրա անքնութիւնից սպըթնած դէմքը:

— Այսօր, — այդ եղաւ նրա առաջին խօսքը, երբ նա զարդուած, տենդային դողով բանուած վեր կացաւ տեղից: — Այսօր, — հնչում ու շնչում էր նրա ականջների մէջ, և սև բծեր շարժւում էին նրա աչքի առաջ:

Առաւօտեան ժամի 10-ին աստիճանի վրայ շտապ բայց լի ձայներ լսուեցան և ներս մտաւ անտառապահը, իսկ նրա ետևից էլ Ռուդոլֆը:

— Տիկին Գիւյխօ, այսօր երեկոյեան պատրաստ կը լինիք:

Նա աչքերը լսյն բաց արած նայում էր այդ երկու աղամարդկանցը և չէր կարողանում ոչ մի խօսք արտասանել:

— Պատրաստ էր, — կրկնեց անտառապահը: Նրա աչքերը փայլեցին, յօնքերը կիտուեցան:

— Ամեն բան պատրաստ է, — չարատանջ ճիգ թափելով պատասխանեց կինը:

— Լաւ, այսօր, հենց որ մութն ընկնի, Ռուդոլֆը կը գայ ձեզ տանելու: Իսկ դու, բարեկամ, աշխատիր զուգուես, — խօսքը բարձրեց Ռուդոլֆին, իսկ ինչ էր վերաբերուի տիկին Գիւյխօին, էլ հարկ չկայ նրան յիշեցնելու, թէ բա-

Նը ինչքան լուրջ է, իսկ հայրենիքի հետ կատակ անել կարելի չէ:

Վերջին խօսքերը նա ցած և սպառնական ձայնով արտասանեց: Ռէյն Գիւյիօն հասկացաւ այդ խօսքերի իմաստն ու սարսուռ անցաւ մարմովը:

Անտառապահը յետ դարձաւ գէպի դուռը, իսկ Ռուդոլֆը նրան կանգնեցրեց ու ականջին մի բան փսփսաց:

— Հա՞, նա, պրուսացու բնակարանը: Բարի եղէք, աի-կին Գիւյիօն, ցոյց տուէք, որտեղ է նրա սենեակը, — հարց-րեց անտառապահը:

Զինուորը ծառայութեան էր գնացել: Այրին մեքենա-բար տեղից վեր կացաւ:

— Հը, վերևո՞ն է: Այդպէս էլ կարծում էի, — նկատեց անտառապահը, երբ կինը սկսաւ մեքենաբար աստիճաներով վեր բարձրանալ: Աստիճանների վերևումնա կանգառաւ, էլ չէր կ'որողանում առաջ գնալ: Տղամարդիկ ներս մտան:

— Դուռը հեշտ ու առանց ձայնի է բացւում, — ասաց անտառապահը դուռը բանալով:

— Կողզէք էլ չունի, — աւելացրեց Ռուդոլֆը:

— Ուշից է, ասաց անտառապահն ու գլուխ տուեց Ռէյն Գիւյիօնին: Շատ լաւ է, տիկին Գիւյիօն:

Նրանք դիտող աչքով զննեցին սենեակի ներսը: Ան-առապահը Ռուդոլֆին արմունկով բրդեց:

— Այսանդ շատ դորժ չենք ունենալ անելու, — հետ-նօրէն աւելացրեց նա:

— Կարծում եմ այդ մասին հոգ տանող կլինի, — կո-պիտ ծիծաղով պատասխանեց Ռուդոլֆը, և երկուսն էլ դուրս գնացին:

Վաղուց տղամարդիկ հեռացել էին, բայց Ռէյն Գիւյիօն դեռ կանգնած էր աստիճանների գլխին, զղաձգաբար վանդակափայտից բռնած: Ռւզում էր ցած գնայ, բայց ոյժ չունէր. ուզում էր մի բան մտածել, մի ելք գտնել, բայց միաքը նրան չէր հպատակում և միայն մի զգացմունք դեռ կենդանի էր մնացել նրա մէջ — յուսահատութեան և սար-սափի խուլ զգացմունքը: Ժամացոյցի սլաքը պտաւում էր շարունակ, բոպէները գլորւում էին, իսկ նրան թւում էր,

թէ սառցային հեղեղատի մատնուած գնում է առաջ, ուր ոչ միտք կայ, ոչ կեանք, ոչինչ էկայ բացի յաւիտենական գիշերից:

Ինչպէս նախընթաց օրերը, այսօր էլ ուլանի համար ճաշ էր պատրաստում, բայց ձեռները թուլանում էին և մեծ դժուարութեամբ էր կարողանում նորից գործի կպչելէ նրան թւում էր, թէ ճաշ է պատրաստում մեկի համար, որն այլ ևս պէտք չունի կերակրի, որը մեռած է:

Եւ հէնց որ նրա քայլերի ձայնը չառաւ, կարծես սառ զուր ածեցին վրան: Վախեցած նա թագ կացաւ, շունչը փորը ձգեց. մի գուցէ ուլանը խոհանոց մտնի: Բայց երիտասարդը ուրախ-զուարթ շվշվացնելով աստիճաններից վեր վաղեց. հէնց իմանաս նա այսօր չպէտք է մեռնէր: Միթէ նրա նախազգացմունքը չպիտի յայտնէ, թէ ում աչքերն էին այսօր իւր սենեակը դիմել և բնչ եղեան էր կատարուելու այս գիշեր: Միթէ արեան հոս չպիտի՝ առնէ: Բայց ոչ նա ուրախ, երգեր է երգում: ահա լսւում է նրա զիլձայնը:

Երբ որ ուլանը ճաշի եկաւ ու իւր տանտիրուհու երեսի մեռելային գյոնը նկատեց, իւր ուրախութիւնն էլ կորաւ: Այրին. լուռ գլխով արաւ, նրա շրթունքները խորովուել, իրար էին կպել. նա ոչ խօսել էր կարողանում և ոչ ուլանի երեսին նայել: Լուռ բերեց ճաշը, տուաւ երիտասարդին, և սա չէր համարձակում ենդրել, որ կինը առաջուայ պէս գայ իւր կողքին նստի նրեն համար պարզ էր, որ այրին իւր ազատ կամբովը չէ գնում Ռուդօլֆին, և վախենում էր, մի գուցէ իւր հարց ու փորձերով նրա վերքերը բորբոքէ:

Կէս օրից յետոյ ուլանը մի անսովոր շարժում ու աղաղակ լսեց: Մի մեծ խումբ հագուած զգուած կանայք եկել ու իրենց շատախօսութիւններով ու զուարթութեամբ լցրել էին լուռ տունը: Դոները բացւում էին ու փակւում, մետաքսէ կանացի զգեստները ենթաշում: Հաւաքուածներին լաւ դիտելու համար նա դուրս եկաւ ախոռից, ուր իւր ձին էր մաքրում, ու ներս մտաւ տուն: Մի վայելչակազմ ու գեղեցիկ կին նախասենեակում դուրս եկաւ զինուորականի առաջ ու նրա ճանապարհը կարելով ասաց.

— Ոչ, պարոն ուշան, — բարձր ձայնով ասում էր նա մետաքսեայ սպիտակ թաշկինակը շարժելով. — այս մեր գաղանիքն է և աղամարդիկ չպէտք է իմանան այդ: Աերջը, երբ հարսնացուին հիագուեցնենք ու կղարդարենք, այն ժամանակ ձեզ էլ կըկանչենք, այն ժամանակ դուք պէտք է նրան աեսնէք:

Գեղեցկուհին ծիծաղում էր, որի միջոցին երևում էին նրա սպիտակ սուրբ ատամեները, որից նրա դէմքը համարեա վայրենի արտայայտութիւն էր ստանում:

Կէս ժամփց, երբ որ արդէն մութը կոխել էր, նա նորից երևաց դրան մէջ և ուշանին կանչեց.

— Պարոն ուշան, եթէ ուզում էր այժմ կարելի է...

— Բայց գուցէ տիկին Գիւյիօին հաճելի չլինի, — անվճռաբար հարցրեց նա:

— Ամենւէին, ամենւէին, — լսուեց ամեն կողմից, բոլոր կանայք շրջապատեցին նրան ու ներս քաշեցին:

Նա զարմացած կանգնեց չէմքում: Սեղանը մի կողմ էին քաշել, բոլոր մոմերը վառել, իսկ սեղանի մօտ նստած էր Ռէյն Գիւյիօն: Նա իւր տանտիրութուն չճանաչեց՝ սովորական սև զգեստի տեղ, որով սովոր էր նրան տեսնելու, բաց կարմիր մետաքսեայ շրջազգեստը պինդ պատել էր նրա վայելակազմ մարմինը: Սարդոլինեայ մանեակը կախած էր գեղեցիկ վիզը, ձախ ձեռնին ունէր սոկէ ապարանջան. բայց նրա ձեռները թուլացած վիր էին ընկած: Նա աւելի զոհի քան հարսի էր նմանում: Երբ որ ուշանը երևաց տան մէջ, այրին մի արագ հայեացք ձգեց նրա վրայ և նորից անտարբեր կերպով աչքը ցած խոնարհեց: Աղմկալի ու զուարթ կանայք պատել էին նրան:

— Տեսէ՞ք, պարոն ուշան, — կանչում էին նրանք, — գեղեցիկ է, այնպէս չէ: Հը: Պէտք է որ պ. Ռուդոլֆը գոհ լինի այսպիսի նշանածից: Հա, հա, հա: Տեսէք, ի՞նչ գեղեցիկ ձեռներ ունի:

— Հապա ոտնե՞րը, — կանչում էր վայելակազմ գեղեց. Կուհին չոքելով Ռէյն Գիւյիօի առաջ, — և այս սիրուն ուսներն այս երեկոյ պիտի պարեն, պիտի պարեն, այնպէս չէ madame la Reine: — Նա բանեց Ռէյն Գիւյիօի ուսները, թոթուեց և սկսաւ անզուսպ ծիծաղել:

— Թողէք ինձ, — գոչեց տանջուած կինը: Նա յետ մղեց

գեղեցկուհուն և զայրոյթով բորբոքուած աչքերը չորս կողմը
բոլորելով վեր կացաւ տեղից:

—Գնանք, —կանչեց գեղեցկուհին, —Ռութօլֆին ասենք,
որ դայ իւր խօսեցեալին տանէ:

—Գնանք Ռութօլֆի մօտ, —կրկնեցին բոլոր կանայք,
—ցաեսութիւն, աիկին Գիւյիօ, ցաեսութիւն, —և բոլորը
միասին դուրս վազեցին լուռ կանգնած ուշանի մօտով:

—Նա չգիտէր, ի՞նչպէս բացատրէր այս աարօրինակ տե-
սարանը: Այս կանայք բոլորն էլ ասես թէ հարրած լի-
նէին: Երբ որ նա երեսը Ռէյն Գիւյիօի կողմը դարձրեց,
այրին նստած էր կռները սեղանին ու ձեռներով երեսը
ծածկած: Երիտասարդը խորին կարեկցութեամբ շարժուած
մուեցաւ նրան:

—Տիկին Գիւյիօ, ներեցէք ինձ. բայց ինձ թւում է,
թէ դուք ակամայ էք համաձայնել այս ամուսնութեանը:

Այրի կնոջ սիրազ ճմլուեց, ձեռները վայր սահեցան.
Նա երեսը դարձրեց նրան և երիտասարդը շտապեց նրան
գրկելու, որովհետեւ նա թուլացած ընկաւ իւր թևերի մէջ:
Ուլանը զգում էր նրա մարմնի սարսուռը, և նրան սեղ-
մում էր իւր կրծքին: Լուռմ էր չարատանջ հառաչանքներ,
որոնք դժուրս էին ժայթքում կնոջ կրծքից:

—Միթէ անպատճան պիտի կատարուի այս: Միթէ
չէք կարող խոյս տալ, —կամացով հարցրեց նա:

Թուլացած կինը նայեց նրան և հաղիւ լսելի ձայնով
արտասանեց.

—Այսպէս պէտք է... անհրաժեշտ է...

Երիտասարդն ուղում էր խօսել, բայց կինը գլխով
բացասական նշան տրեց աչքերը նրա դէմքին սեռուած: Ա-
պա ձեռները նրա ճառը ձգած սկսաւ բուռն համբոյներ
դրոշմել նրա աչքերին, մազերին, շրթունքներին...:

—Դուք պյս երեկոյ գնալու տեղ ունի՞ք, —շշնչաց նա:

—Ոչ:

—Սրճարան գալու չէ՞ք:

—Ոչ:

—Շատ լաւ էք անում, շատ լաւ էք անում, —շշն-
չում էր նա: —Պատուհանի կրկնափեղկերը կը փակէ՞ք:
Հա՞, լսեցի՞ք:

—Եթէ դուք այդպէս էք ուզում, ուրախութեամբ կանեմ, —ասաց նա:

Այրին գլուխը շարժեց: Երևում էր, որ նա ինքն իւրեն կոիւ էր տալիս: Նա վախվսելով իւս չորս բոլորքը նայեցաւ և կռացաւ դէպի նրա ականջը:

—Մի բան էլ, —շնչաց նա, —լսեցէք, մի բան էլ պի. տի ասեմ..., այս երեկոյ...

Այդ միջոցին դրսի գուռը ուժգին շրսկաց: Ռէյն Գիշիօն յետ բաշուեց, ուլանը շտապով աստիճաններից վեր բարձրացաւ, մտաւ իւր սենեակը, և աղմկարար կանայք Ռուդոլֆի առաջնորդութեամբ դարձեալ լցուեցան ներս:

Ուլանը աստիճանի վանդակների արանքից տեսնում էր, թէ ինչպէս նրանք շրջապատեցին Ռէյն Գիշիօնին, վերնազգեստը վրան ձգեցին և յաղթական կերպով աարան: Դուռը ըրսկաց, ամեն բան խաղաղեց:

Տանտիրուհին վերջին խօսքը չաւարտեց: Ի՞նչ էր ուզում ասել: Նա երկար ժամանակ մտածում էր դրա վրայ, յետոյ առաւ լապտերը և ախոռ գնաց: Զմերային գիշերն այնքան խաւար էր, որ կարծես թէ մընացնում էր նոյն իսկ լապտերի լսուը:

Հին նրա մտնելուն պէս կամաց խրինջաց. նա լապտերը կախեց, գտաւ ձիու թամբն ու սանձը: Ծրջապատող մեռելային լոռութեան մէջ յանկարծ մի տարօրինակ ու սըրտամաշ զգացմունք պաշարեց նրան: Կատաղի կանայք, իւր տանտիրուհու տարօրինակ վարմունքը, այս ամենը յիշեց նա և, փոքր ինչ տատանուելուց յետոյ, ձին թամբեց, սանձը գլուխը ձգեց, որպէս զի ամեն մի րոպէ պատրաստ լինի: Ապա յետ դարձաւ տուն: Սենեակի օդը յեղձուցիչ թուաց նրան. բաց արաւ պատուհանը և փողոցն էր նայում: Դէմ ու դէմ, սրճատան պատուհանները լուսաւուրուած էին: Ուզում էր իմանալ, թէ ի՞նչ են անում այնաեղ. բայց փողոցը լսյն էր և անկարելի էր պյտ հեռաւուրութիւնից մի բան նկատել: Մի խումբ ուլաններ, բարձրաբարձր զօից անելով ու ծիծաղելով, միեանցից բռնոտած իւրենց աներն էին գնում: Նրանց լեզուները բերանների մէջ դժուար էր պտառմ. պարզ է, որ հարբած էին: Բայց ահա նրանք էլ գնացին և գիւղը դարձեալ մեռելային լուռւ-

թեան մէջ ընկաւ. ոչ մի տեղից ոչ մի ձայն չէր լսւում: Նա պատուհանը ծածկեց և մտաբերեց նաև կնոջ խնդիրը: Երկի նա վախենում էր թէ մի՛ գուցե՛ իւր հիւրը տեսնէ մի այնպիսի բան, որ կատարուելու էր սրճատանը, բայց չէր ուզում որ տեսած լինի: Սակայն ուշանը իւր խոսառւմը յիշեց և փեղկը փակեց: Կարծես նա այժմ արդէն բուրովին հանդսացած էր, բայց էլի ընել չէր ուզում: Պայուսակից հանեց քառուսիհա հատորը, նստաւ սեղանի առաջ և սկսաւ կարգալ: Մի ժամից գորի տառերը սկսան նրա աչքի առաջ թռչկուալ և, իւր ձեռներին յենած, նիրհեց:

Յանկարծ... ուշ գիշերին էր. նա մի սարսափելի աղմուկից վեր թռաւ: Նրան թւում էր: թէ շատ մարդկանց ձայն է լսում: Սկզբում կարծում էր, թէ երազի մէջ է, բայց բոլորովին ուշքի գալով հասկացաւ, որ երազ չէր: Դէս-դէն վազող մարդկանց ոտների ձայնը խուլ կերպով հնչում էին սառած գետնի վրայ: Պարզ էր, որ ներքեւում շատ մարդ էր հաւաքուած:

Հէնց այն է ուզում էր պատուհանը բաց անե, որ փողոց նայէ, յանկարծ կանգ առաւ. նա լսեց, թէ ինչպէս դրսի դուռը ուժով փակուեց և բանալին չափազանց արագութեամբ երկու անգամ պատուեց գոցի մէջ:

Թռւուրը սեղանի վրայ էր. վեր առաւ, մէջքը կապեց ու լամպարը ձեռին նախասենեակ գնաց:

— Ո՞վ է, — գոգաց նա:

Նոյն բոպէին տեսաւ Ուշյն Գիւյխօինս Երեսը մոխրի գոյն էր ստացել, աչքերը լայն բացուած, կուրճքը ուժգին ելեւշ անում, ասես թէ վազած լէնէր:

— Զին, — տնքաց նա, — ձին թամբեցէք, և փախէք, փախէք...:

— Ի՞նչ եղաւ:

— Այնտեղ, ձեր սպաները... սպանուեցան: Ազատ հրացանաձիգնե՛րը խեղդուելով ասում էր նա:

Երիտասարդը խուլ կերպով աղաղակեց և յետ բաշուեց: Այրին երկու ձեռքով բռնեց նրա ձեռքերից ու ներքեւ բաշ տուեց:

— Իմ ընկերներս, — կանչեց նա և դէպի դրսի դուռը վազ տուեց:

Ուշյն Գիւյիօն կախ ընկաւ նրա մարմնից, ասես թէ
իւր մարմնի ծանրութեամբ ուզում լինէր նրան արգելք լինել:
—Այս դռնով մի գնաք, —աղաչում էր նա: —Այս-
տեղից մի գնաք, ձեռները կընկնէք: Ուշաններին կոտորում են:

Այդ միջոցին դրսի դուռը բռունցքի անզուսպ հա-
րուածներից դղրդաց: Երիտասարդը երկու ոստիւնով դուրս
թռաւ բակը, Ուշյն Գիւյիօն նրա ետևից:

Մինչև նա ձին ախոռնից դուրս էր բաշում, լսուեց
Ռուդոլֆի վայրենի դուռոցը.

—Բաց արէք, —գոռոում էր նա, —բաց արէք, տիկին
Ուշյն, բաց արէք:

Դուռը չէր բացւում. դուրսը սարսափելի ոռնոց բարձ-
րացաւ, ասես թէ գայլերի մի ամբողջ ոչմակ հաւաքուած
լինէր դրան առաջ: Լսուում էր, թէ ինչպէս դռները խոր-
տակւում էին, տախտակները ճարճատում ե, վերջապէս
մեծ դռները բացուեցան և ամբոխը ներս խուժեց:

Ուշանը թռաւ իւր ձիու վրայ:

—Այս կոզմը, —խեղդուելով ասաց կինը, Խլեց ձիու
սանձը ու բաշեց տարաւ գէպի բակի յետևի դուռը: Դու-
ռը բաց արին, գրգռուած ձին հանգիստ չէր մնում:

—Հապա գո՞ւք, —ասաց երիտասարդը, —հապա որ
նրանց ձեռքն ընկնի՞ք:

Այրին ոտը ասպանդակի մէջ մացրեց:

—Դու մենակ ճանապարհը չես գտնիլ, ինձ էլ վերց-
րու հետդ, —ասաց նա խուլ ձայնով:

Երիտասարդը կռացաւ և ձեռքը մեկնեց նրան. մի ա-
կնթարթում կինը թռաւ ձիու թարրը և երկու ձեռքով
գրկեց երիտասարդին:

—Աչ, —ասաց նա երբ որ դռնից դուրս եկան, —այն-
տեղ ճանապարհը աղաս է:

—Առաջ, Էգմոնդ, —կանչեց երիտասարդը և ձին սլա-
ցաւ: Լսուեցան վայրի աղաղակներ ու վաղելու ոտնաձայներ:

Քրանսիացիները լսել էին տրոփիւնը և ուզում էին
փախստականների առաջը կտրել: Երբ որ փախստականները
մեծ ճանապարհը դուրս եկան, ամբոխի միջից սկսան նրանց
ետևից հրացան արձակել: Գնդակները նրանց գլխի վրայով
էին անցնում:

— Վիրաւորուած չե՞ս, — հարցրեց երիտասարդը:

— Աչ, պատասխանեց նա. թևերը պինդ սեղմելով կախից ձիու ոյքը կրկնապատկուել էր: Նետի նման սլանում էին պարտէզների ու ցանկապատերի մօտով:

— Ելի աջ, — ասաց կինը:

Նրանք բաց գաշտ դուրս եկան:

— Սօսիների մօտ խճուղին է, և այնտեղ պէտք է ձախ դառնալ...:

Պինդ, սառած գետնի վրայ լսւում էր ձիու ոտների պինդ ձայները. քանի գնում, աւելի արագ էր փախչում ձին: Վերջապէս եղենեայ անտառը հասան:

— Կանգնիր: Ո՞վ է, — Լսեցին նրանք: Պրուսական առաջապահ գինդի կայանն էին հասել: Ուշանը ձին կանգնեցրեց և բեկրեկուող ձայնով ասաց նշանախօսը:

— Ուր է նախապահ պահնորդը, — հարցնում էր նա պահապահ զինուորին, — ազատ հրացանաձիգները ուշանների էսկադրոնի վրայ յարձակուեցան ու կոտորեցին....

Պահապանը սկսաւ հայնոյել:

Նա ուշանին ցոյց տուաւ, թէ որտեղ էր նախապահ պահնորդը:

— Յիսուն բայլ խճուղու ճանապարհով, ապա դէպի աջ կամրջի վրայով և ապա երկու հարիւր բայլ ուղիղ առաջ: Աւշանը իւր բափում կորած ձին դանդաղ քայլերով առաջ քշեց:

— Այդ ո՞վ է թարբիդ, կանչեց պահապանը:

Բայց ուշանը չլսեց ասածը, նա արդէն անտառի նեղ շաւիղն էր մտել:

Մէկ էլ նա զգաց, որ իւր ընկերակից կնոջ դէմքը սեղմում էր իրեն և լսեց կամաց, դառն հեծկլտանք: Նա բռնեց իւր կեանքը փրկողի ձեռները, անխօս իւր կրծքին սեղմեց ու սկսաւ շշել ու գգուել. Խօսել չէր կարողանում:

Բայց ահա ծառերն սկսան ցանցառանալ, անալօտ կերպով երևաց լճակի կաթնագոյն մակերևոյթը և ապա կամուրջը: Հէնց որ ձիու պայաերը կամրջի գերաններին դիպան Ռէյն Գիւյխն, նախ բան երիտասարդը կարող էր արգելք լինել, ձիուց ցած եկաւ:

— Այդ ո՞ւր ես գնում, — կանչեց նա ձին կանգնեցնելով:

Կինը պինդ բռնեց կամրջի վանդակներից, գլուխը դրեց վրան և լուս կանգնած էր, միայն նրա ամբողջ մարմինը ջղաձգաբար ցնցւում էր:

Ուշանը ական թօթափել ձիուց վէր թռաւ, գրկեց նրան, բայց կինն այնպէս պինդ բռնած էր վանդակներից, որ երիտասարդը հազիւ կարողացաւ նրան մի կողմ քաշելու բազուկների մէջ առնել:

Վնզ ծնկները ծալւում էին, գլուխն ընկաւ կրծքի վըրայ և անմիթար, յուսահատութեամբ լի հեծկլացը դուրս պոռթաց նրա կրծքից:

— Դու... այժմ... ձերայինների մօտ կգնաս, — ասաց նա, բայց հեծկլացը ընդհատեց նրան, և վաղը ձերայինը կըդան... և վրէժ կլուծեն,.. կայրեն գիւղը... և այդ բռւրի... պատճառը ես եմ... ես... ես... ես հայրենիքիս դաւաճանեցի... և ես, — նա իւր դէմբը հուպ տուաւ նրա կրծքին, կարծես ուզում էր այնտեղ թագնուել, — հայրենի՞քս, և եղած հայրենիքս....

Նրա հեծկլացը փոխուեց մարդու սիրա կտրատող խուլ թառանչների և յանկարծ նա վայրենաբար կանչեց:

— Այլապէս կարող էլ չէլ վարուել: Որովհետեւ, գիտցիօ ուրեմ, ես սիրեցի քեզ, և սիրում եմ... ո՛չ, սիրում եմ, սիրում, — և նա բռուն զգացմունքով գրկեց նրան և սկսաւ մոլեգնաբար համբուրել: — Այժմ դու փրկուած ես, անվտանգ, կըվերադառնաս մօրդ մօտ..., և իմ կողմից կը ողջունե ս նրան, հա՞:

Երիտասարդի սիրտը լցուեց և աչքերը արտասուակալեցին:

— Այո, կողջուննեմ...

— Իմ տեղս կը համբուրե՞ս փոքրիկ քրոջդի:

— Հազար անգամ, հազար անգամ, հեկեկում էր նա:

— Իսկ դու, դու չե՞ս մոռանալ, կյիշե՞ս թշուառ, թշուառ Ռէյն Գիւլիօին, կըյիշե՞ս, հա՞, կըյիշե՞ս...

Երիտասարդը իւր բազուկների մէջ պինդ հուպ տուաւ նրան և համբուրեց պայտ արտասուաթաթախ, սիրելի դէմբը:

Յանկարծ կինը դուրս պրծաւ նրա գրկից, յետ պոթեց

նրան ուսերից։ Ուլանը ակամայ յետ գնաց, և միւնոյն միջոցին Ռէյն Գիւյիօն կամրջից ներքե վաղեց և կորաւ մը-թութեան մէջ։ Ուլանը նրան հետևեց, բայց ոչինչ ոչ տես-նելով և ոչ էլ լսելով, կանգ առաւ։

—Բան եմ ասում, —կանչում էր նա, —ի սէր Աս-
տուծոյ, լսեցէք, բան եմ ասում։

Լճակի միւս ափից լսուեց ջրի պատռուելու ձայնը և
սրտաճմլիկ հառաջանք։ Ուլանը ծառերի արմատներին զար-
նուելով, ձեռներով երեսին դիպչող եղենիների ճիւղերը մի-
կողմ անելով վաղեց դեպի այն կողմը։ Բայց արդէն ամեն
ինչ խաղաղել էր։ Միայն եղէգն էր կամաց շարժւում լը-
ճակի թեթև կոհակնեից, մէկ էլ ջուրն էր հազիւ լսելի
ծղփիւնով ափին զարնւում։

Նա թուլացաւ և յենուեց մի ծառի։ Կեանքի պ'յն զար-
հուրելի ժամերիցն էր այդ, երբ մի ակնթարթում մարդուս
մազերը սպիտակում են և որը անմոռանալի է մնում յաւի-
տեան...

Թարգմ. ՄՈՒԾԵ ՎԱՐԴԱՊԵՏ

